

**ԱՂՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Սարգիս Հարությունյան**

Սույն թվականի նոյեմբերի 6-ին Աղբբեջանում տեղի ունեցած խորհրդարանական ընտրությունների գործընթացը պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի.

- ❖ նախընտրական զարգացումներ, որոնց արդյունքում հիմնականում նախանշվեց խորհրդարանական ընտրությունների ելքը,
- ❖ հետընտրական իրավիճակ, որն ավելի շատ առնչություն ունի խնդրի աշխարհաքաղաքական կողմի հետ:

Հատկանշական է, որ բուն ընտրությունները՝ նոյեմբերի 6-ին կայացած քվեարկությունը, ըստ էության, ոչինչ չորոշեցին: Այսինքն՝ արդեն այդ օրվա դրությամբ Ալիե-կրտսերը երկրի ներսում չունեի իրական ընդդիմություն, իսկ Աղբբեջանից դուրս՝ բոլոր հիմնական դերակատարների հետ ձեռք էին բերվել որոշակի պայմանավորվածություններ:

Մաս առաջին. նախընտրական զարգացումներ

Հոկտեմբերի երկրորդ կեսին կտրուկ սրվեց նախընտրական իրավիճակն Աղբբեջանում: Իշխանությունների հետագա գործողությունները, մասնավորապես՝ ուժային գրեթե ողջ համակարգի խստացված ծառայության ռեժիմին անցնելը, վկայում էր, թե ինչքան լուրջ էր ընդունվել հավանական սպառնալիքը Ալիե-կրտսերի վարչակարգում:

Նշվածը հարկադրում է ենթադրել, որ այդ սպառնալիքն իրականում չէր կարող բխել միայն աղբբեջանական ընդդիմության (հիմնականում «Ազադլիգ», «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքներ) շարքերից: Այսինքն՝ Ալիե-կրտսերը խնդիր ուներ թե՛ իր գլխավորած համակարգի ներսում, թե՛ արտաքին որոշ ուժերի հետ:

Նախընտրական զարգացումները հիմնականում ընթացան երկու կետի՝ աղբբեջանական խորհրդարանի նախկին խոսնակ, Աղբբեջանի Դեմոկրատական կուսակցության նախագահ Ռասուլ Գուլիելի «թռիչքի» եւ դրան հետեւած բարձրանուն ձերբակալությունների շուրջ:

Դեռեւս հոկտեմբերի 10-ին Ռասուլ Գուլիելը հայտարարեց, թե հոկ-

տենքերի 17-ին մտադիր է իննամյա դեգերումներից հետո վերադառնալ հայրենիք՝ մասնակցելու խորհրդարանական ընտրություններին: Վերադարձն, ինչպես հայտնի է, չկայացավ: Նույն հոկտեմբերի 17-ին Գուլիելը ձերբակալվեց Սիմֆերոպոլում: Երկու օրից ազատ արձակվելուց հետո նա մեկնեց Կիև, այնուհետև՝ Լոնդոն, իսկ ներկայումս կրկին հանգրվանել է Միացյալ Նահանգներում, ուր ժամանակին ստացել է քաղաքական ապաստան:

Ակնհայտ է, որ Ռասուլ Գուլիելի Բաքու «վերադառնալու» ակցիան PR-ային բնույթի, ըստ էության, հաջողված գործողություն էր, որը, խոշոր հաշվով, աջակցություն գտավ առնվազն ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ուկրաինայի եւ Յունաստանի (կապված վերջին ժամանակներս նկատվող Ադրբեջան-Յուսիսային Կիպրոս հարաբերությունների ջերմացման հետ) կողմից: Այդ գործողության հիմնական նպատակն էր տեղեկատվական հզոր ճնշում գործադրել Ալիև-կրտսերի վարչակարգի վրա եւ ադրբեջանական ընդդիմադիր դաշտում բարձրացնել անձամբ Ռ.Գուլիելի ու նրա գլխավորած Դեմոկրատական կուսակցության հեղինակությունը: Դա, փաստորեն, տեղի ունեցավ. այդ օրերին ադրբեջանական եւ արտերկրի լրատվամիջոցները լուրջ ուշադրություն էին դարձնում Գուլիելի «թռիչքին» եւ ընդհանրապես՝ Ադրբեջանում ժողովրդավարության խնդիրներին:

Օրինակ, Գուլիելի ձերբակալությունը Սիմֆերոպոլում, իսկ այնուհետև ազատ արձակումը (ընդ որում՝ միջազգային տեղեկատվական դաշտում մոդայիկ եւ գերազանցապես դրական լուսաբանմամբ հանդես եկող ուկրաինական հանրահայտ «Պոռա» շարժման ներկայացուցիչների մասնակցությամբ) տեղեկատվական դաշտում ընկալվեց որպես նրա առնվազն բարոյական հաղթանակ Ալիև-կրտսերի վարչակարգի դեմ, ինչը շատ կարելու էր նույնների 6-ի ընտրություններից առաջ: Այդ առումով պատահական չէր ընտրված նաեւ «վերադարձի» ամսաթիվը՝ հոկտեմբերի 17. հաջորդ օրը՝ հոկտեմբերի 18-ին, Ադրբեջանում նշվելու էր երկրի անկախության օրը:

Ըստ ամենայնի, Ի.Ալիևը Ռ.Գուլիելին դիտարկում է որպես իր, թերեւս, ամենավտանգավոր հակառակորդ: Այդ ենթադրության հիմք են ծառայում Գուլիելի անձնական կարողության, Ադրբեջանի իշխող վարչախմբում նրա պահպանվող ազդեցության եւ Արեւմուտքում ունեցած կապերի գործոնները: Ընդ որում՝ ադրբեջանական իշխող վարչախմբի հատկապես միջին շերտի համար անհրաժեշտության դեպքում շատ ավելի հեշտ ու ձեռնտու է պայմանավորվել ոչ այնքան վաղ անցյալում «իրենց մարդը» համարվող Ռասուլ Գուլիելի, քան, օրինակ, նույն Ա.Քերիմլիի կամ Ի.Ղամբարի հետ:

Պետք է ասել, որ նման երեւոյթը որոշակի առումով ընդհանրական է հետխորհրդային երկրների համար: Այդ իմաստով պատահական չէին Գուլիելի «թռիչքին» հաջորդած բարձրանուն ձերբակալութիւններն Ադրբեջանում: Չնայած, մյուս կողմից, այդ ձերբակալութիւնների մեջ զգացվում էր Ի.Ալիելի՝ հարմար պահն օգտագործելու մտադրութիւնը:

Այսպիսով, Ռ.Գուլիելի «թռիչքի» հետ միաժամանակ, հոկտեմբերի 17-ից Ադրբեջանում տեղի ունեցան մի շարք (մոտ երկու տասնյակ) բարձրաստիճան պաշտոնակալութիւններ եւ ձերբակալութիւններ, որոնք շոշափելի փոփոխութիւն մտցրին Ադրբեջանի ներքաղաքական իրավիճակի մեջ:

Առկա տեղեկատվութեան վերլուծութիւնը ցույց է տալիս, որ Ադրբեջանի տնտեսական զարգացման այլեւս նախկին նախարար Ֆարիադ Ալիելի ձերբակալութիւնը Ալիելի-կրտսերի մերձավոր շրջապատում դիտարկվում է որպէս ավելի բարձր իշխանական հավակնութիւններով, Արեւմուտքում եւ ադրբեջանական ընդդիմութեան շրջանում սերտ կապեր ունեցող, ինչպէս նաեւ տնտեսական զգալի կարողութիւնների տեր անձնավորութեան չեզոքացում: Այդ հանգամանքը Ի.Ալիելի վարչախմբի կողմից մատուցվեց որպէս «պայքար հակապետական դավադրութեան, կոռուպցիայի դէմ»:

Մի փոքր այլ պատմութիւն է Ադրբեջանի առողջապահութեան նախկին նախարար Ա.Ինսանովի ձերբակալութիւնը, ինչը առաջին հերթին, թերեւս, պետք է կապել Յեյդար Ալիելի եղբոր՝ Ջալալ Ալիելի եւ Ի.Ալիելի միջեւ առկա հակասութիւնների հետ: Յ.Ալիելի մահվանից հետո նրա եղբայրը մեկ անգամ չէ, որ դժգոհութիւն է հայտնել «իշխանութիւնը երիտասարդին փոխանցելու» հանգամանքից: Այդ առումով՝ Ջ.Ալիելի-Ա.Ինսանով հայտնի կապերը, թերեւս, վճռորոշ են եղել: Ա.Ինսանովի ձերբակալութիւնը նույնպէս ներկայացվեց «հակապետական դավադրութիւնների եւ կոռուպցիայի դէմ պայքարի» համատեքստում:

Այսպիսով, եթէ փորձենք ընդհանրացնել, ապա մոտավորապէս ս.թ. հոկտեմբերի սկզբից ակնհայտ դարձավ գերազանցապէս Միացյալ Նահանգների ճնշման շեշտակի ակտիվացումը Ալիելի-կրտսերի վարչակարգի նկատմամբ: Հոկտեմբերի 5-ին, ԱՄՆ-ում, 1997-1999թթ. ընթացքում Ադրբեջանի «բարձրաստիճան պաշտոնյաներին» տասնյակ միլիոնավոր դոլարների կաշառք տալու մեջ մեղադրվեցին հանրահայտ Կոզենին եւ նրա ամերիկացի երկու գործընկերները: Կոզենիի դեպքին հաջորդեց Ռ.Գուլիելի «թռիչքը»:

Այդ տեսանկյունից պետք է առանձնացնել նաեւ ԱՄՆ պետքարտուղարի Եվրոպայի եւ Եվրասիայի հարցերով օգնական Դենիել Ֆրիդի՝

ս.թ. հոկտեմբերի 20-ին Բաքվում արած այն հայտարարությունը, թե պաշտոնական Վաշինգտոնը կճանաչի Ադրբեջանի խորհրդարանական ընտրությունների արդյունքները, եթե «էքզիթ-փոլի» եւ ադրբեջանական Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացված տվյալների միջեւ եղած տարբերությունը չգերազանցի 2%-ը:

Հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ձերբակալված նախարարներն ու բարձրաստիճան այլ պաշտոնյաներ (այդ թվում՝ երկրի ներքին գործերի համակարգից) առաջին հերթին մեղադրվեցին «պետական հեղաշրջման կազմակերպման մեջ»: «Կաշառակերության» վարկածն ի հայտ եկավ ավելի ուշ: Եթե սրան հավելենք նաեւ այն հանգամանքը, որ «դավադիրներին» վնասագերծելու գործողությունը ողջ ընթացքում գտնվում էր 2004թ. ամռանը Իլհամ Ալիեւի կողմից Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարի պաշտոնում նշանակված Էլդար Մախմուդովի անմիջական ղեկավարման ներքո, ապա իրականում մեծանում է զոյություն ունեցող վտանգի լրջության աստիճանը:

Եվ վերջապես, վերոհիշյալին պետք է հավելել նաեւ իշխանական համակարգում մրցակիցներից (ներկլանային խմբավորումներ) ազատվելու Իլհամ Ալիեւի մտադրությունը: Այդ առումով ամենեւին էլ պատահական չէ այն վարկածը, ըստ որի՝ 2003թ. հոկտեմբերի 15-ի նախագահական ընտրություններն Ալիեւ-կրտսերը բավական «ծանր» տարավ նաեւ իր հոր՝ Յեյդար Ալիեւի կողմից ժառանգություն թողնված կլանի ներսից ցուցաբերված որոշ խոչընդոտների պատճառով. նպատակը հնարավորինս թույլ նախագահ ունենալն էր:

Մաս երկրորդ. հետընտրական իրավիճակ

Պետք է ասել, որ «հետընտրական իրավիճակի» առաջին նշաններն ի հայտ եկան դեռեւս նոյեմբերի 6-ի ընտրություններից առաջ: Մասնավորապես, արդեն հոկտեմբերի 27-ին, գտնվելով Գյանջայում, Ադրբեջանում ԱՄՆ դեսպան Ռինո Յարնիշն ուղղակիորեն կոչ արեց ադրբեջանական ընդդիմությանը զերծ մնալ բռնությունների կիրառումից, ինչը կարող է խանգարել ընտրությունների ընթացքին:

Ընդամենը մեկ օր անց, Վաշինգտոնում «Heritage» հիմնադրամի կազմակերպած կլոր սեղանի ժամանակ, գրեթե նույն բառերը կրկնեց վերոհիշյալ Դենիել Ֆրիդի տեղակալ Մեթյու Բրայզը:

Սակայն ամերիկյան պաշտոնատար անձանց բարյացակամ վերաբերմունքը կարճ տեւեց, եւ արդեն նոյեմբերի 8-ին ԱՄՆ պետքարտուղարությունն իր պաշտոնական համաձայնությունը հայտնեց մեկ օր առաջ

հրապարակված Եվրախորհրդարանի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, ԵԱՀԿ ժողովրդավարական ինստիտուտների եւ Մարդու իրավունքների գրասենյակի ու ՆԱՏՕ Խորհրդարանական վեհաժողովի պատվիրակներից կազմված Միջազգային համատեղ դիտորդական առաքելության այն գնահատականին, թե ընտրությունները չէին համապատասխանում ԵԱՀԿ եւ Եվրոպայի խորհրդի առաջարկած չափանիշներին¹:

Ի հակակշիռ վերոհիշյալի՝ Ռուսաստանի գլխավորությամբ աշխատող ԱՊՀ դիտորդական առաքելությունը, ինչպես նաեւ թուրքական ու իրանական դիտորդական առաքելությունները ընտրությունները բնութագրեցին որպես ժողովրդավարական: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինն անգամ շնորհավորեց Ալիեւ-կրտսերին ընտրությունների անցկացման կապակցությամբ: Ըստ որոշ տեղեկությունների՝ նա առաջիկայում պետք է ժամանի Բաքու:

Տպավորություն է ստեղծվում, թե հատկապես անցած մոտ մեկ ամսվա ընթացքում Վաշինգտոնը կարողացել է զգալի հաջողությունների հասնել Ադրբեջանի հետ ունեցած խնդիրների լուծման գործում: Համրահայտ է, որ այդ խնդիրները հիմնականում բաժանվում են չորս մասի՝ շարժում գործադիրություններ (այս պարագայում պետք է ավելացնել Ուզբեկստանից ամերիկացիների հեռանալու հանգամանքը), Ադրբեջանը եւ Կասպից ծովը՝ որպես տարանցիկ ուղի դեպի Կենտրոնական Ասիա (ընդհանրապես՝ Ադրբեջանը որպես հարմար հենակետ), կասպյան էներգակիրներ եւ իրանական հարց: Ներկայացվածի համատեքստում աչքի է զարնում ընտրություններից առաջ՝ հոկտեմբերի 26-ին տեղի ունեցած Միացյալ Նահանգների փոխնախագահ Դիկ Չեյնիի հեռախոսազրույցը Իլհամ Ալիեւի հետ:

Իր հերթին, ակնհայտ էր, որ կոնկրետ ընտրությունների հետ կապված՝ Ալիեւ-կրտսերը լուրջ խնդիրներ չունեցավ ամերիկյան (կարելի է ասել, ընդհանուր առմամբ՝ արեւմտյան) կառույցների հետ: Դեռ ավելին՝ Իլհամ Ալիեւի վարչակարգի բավական կոշտ պահվածքը միջազգային մի շարք դիտորդների, լրագրողների նկատմամբ (որոշ դեպքերում՝ նրանց վտարումը Ադրբեջանից)² պարզապես ստիպում է մտածել ընտրություններից առաջ Վաշինգտոն-Բաքու հավանական պայմանավորվածության մասին:

Սակայն այդքանով հանդերձ, հարցը չի կարող փակված համարվել նման «պարզունակ» գործարքով: ԱՄՆ պետքարտուղարության վերոհիշյալ՝ նոյեմբերի 8-ի հայտարարությունը եւ Ադրբեջանում Միացյալ Նահանգների դեսպան Ռինո Հարնիշի գործունեության որոշակի փոփոխությունը (հանդիպումներն ընդդիմության ներկայացուցիչների

հետ, Ադրբեջանի իշխանություններին ուղղված դեսպանի կոչերը՝ մի շարք ընտրատարածքներում «վերականգնել արդարությունը» եւ այլն) կարող են վկայել հետեւյալի մասին.

❖ Վաշինգտոնը քայլեր է ձեռնարկում նոր միջոցների ստեղծման ուղղությամբ, որոնց օգնությամբ հետագայում կկարողանա Ալիեկրտսերի վարչակարգի նկատմամբ մեծացնել իր ազդեցությունը կամ, որոշ պարագաներում, նաեւ ճնշումը,

❖ ԱՄՆ-ը քայլեր է ձեռնարկում՝ ուղղված միջազգային հարաբերություններում սեփական հեղինակության պահպանմանը,

❖ ընդհանուր առմամբ, ԱՄՆ քաղաքականությունը միտված է Իլիամ Ալիեւի վարչախմբի հետագա հեղինակազրկմանը:

Ստեղծված իրավիճակում ուշագրավ է նաեւ «եվրոպական գծի» պահվածքը: Ըստ ամենայնի, ներկայում եվրամիությունը որդեգրել է տեղի ունեցած ընտրությունների նկատմամբ ամենաբացասական դիրքորոշումը (օրինակ՝ Բաքվում Յունաստանի, Նորվեգիայի դեսպանների պահվածքը եւ այլն): Այն կարող է, առաջին հերթին, կապված լինել նախընտրական պայմանավորվածություններում Բրյուսելի կարծիքը սահմանափակ կերպով հաշվի առնելու հանգամանքով: (Ի դեպ, այդ առումով նկատելի է Յարավային Կովկասում եվրամիության դիրքերի որոշակի թուլացում. Վրաստանի արտաքին գործերի այլեւս նախկին նախարար Սալոմե Ջուրաբիշվիլու պաշտոնակության դեպքը, թերեւս, կարող է ծառայել որպես ցուցիչ: Ըստ ամենայնի, առաջիկայում պետք է սպասել մեր տարածաշրջանում «եվրոպական ընդհանրական գծի» հետագա թուլացում):

Թերեւս, սխալված չենք լինի, եթե նշենք, որ ԱՄՆ-ից հետո իրավիճակից փորձեց առավելագույնս շահեր քաղել Ռուսաստանը: Պուտինի հրապարակավ աջակցությունը Ալիեւ-կրտսերին, ընտրություններից առաջ ռուսական հատուկ ծառայությունների նախկին ու ներկա մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների այցերը (այդ թվում ս.թ. հոկտեմբերի 20-ին Ռուսաստանի Արտաքին հետախուզության ծառայության պետ Սերգեյ Լեբեդեւի ժամանումը Բաքու) Ադրբեջանի մայրաքաղաք, ընտրություններին ԱՊՀ դիտորդական առաքելության դրական գնահատականը այդ ամենի վկայությունն են:

Առկա իրադրությունում Կրեմլի համար, ըստ էության, ամենից հարմար թեկնածուն Մոսկվայում կրթություն ստացած, այդ թվում հոր՝ Յեյդար Ալիեւի շնորհիվ խորհրդային հատուկ ծառայությունների հետ բավական սերտ կապերի մեջ եղած Իլիամ Ալիեւն է: Որպես պահեստային

տարբերակ՝ ռուսական կողմը փորձեց խաղարկել ներկայումս Մոսկվայում բնակվող, Ադրբեջանի նախկին նախագահ Այազ Մուֆալիբովի գործոնը՝ նաեւ «Յենի սիյասեթ» նախընտրական դաշինքի շրջանակներում:

Ռուսական գործոնի իմաստով ուշագրավ է նաեւ Ադրբեջանի տնտեսական զարգացման նոր նախարարի նշանակումը: Այդ պաշտոնում նորանշանակ Յեյդար Բաբաեւը հայտնի է մոսկովյան գործարար շրջանակների հետ ունեցած բավական լուրջ կապերով (եղել է ռուսական «Մոստբանկի» փոխնախագահը, իսկ այնուհետեւ՝ ադրբեջանական մասնաճյուղի ղեկավարը եւ այլն):

Ամենեւին էլ պատահական չէր թուրքական կողմի աջակցությունը Ալիեւ-կրտսերին: Ավանդական դաշնակցային հարաբերություններից զատ, այս ընտրությունների ժամանակ կարելուր դեր խաղաց նաեւ Յյուսիսային Կիպրոսի հարցում պաշտոնական Բաքվի նոր՝ ընդգծված թուրքամետ նախաձեռնությունը: Դա էլ, իր հերթին, կարող է նշանակել Ալիեւ-կրտսերի վարչակազմում Անկարայի դիրքերի զգալի ուժեղացման մասին:

Նկատելի էր իրանական դերակատարության պասիվությունը: Թեհրանի պասիվությունն ու իրանական դիտորդական առաքելության հայտարարությունը, թե ընտրությունները համապատասխանում էին ժողովրդավարության չափանիշներին, կարող են վկայել այն մասին, որ Ադրբեջանի քաղաքական դաշտում ներկայումս Իրանը չունի որեւիցե լուրջ ռեսուրս. իսլամական գործոնը դեռ բավական ուժեղ չէ: Յետեւաբար, իրանական քաղաքականության, թերեւս, գլխավոր նպատակն է լարվածություն չառաջացնել Ալիեւ-կրտսերի վարչակարգի հետ՝ նաեւ հաշվի առնելով ամերիկա-իրանական հարաբերություններում Ադրբեջանին շատ հաճախ հատկացվող դերակատարությունը:

Յետևություններ

Չնայած ներկայումս նկատվող ադրբեջանական ընդդիմության հետընտրական ակտիվացմանը, թիչ հավանական է, որ մինչեւ 2008թ. նախագահական ընտրությունները Ադրբեջանի իշխանական համակարգում տեղի ունենան լուրջ փոփոխություններ: Անշուշտ, ամեն ինչ պետք չէ բացառել, սակայն հաշվի առնելով ուժեղ ընդդիմության բացակայությունը, իշխող վարչակարգի կողմից արտաքին դերակատարների հետ առժամանակ ձեռք բերված պայմանավորվածությունները եւ տարածաշրջանային զարգացումների կանխատեսելիության համեմատաբար

ընկալելի վիճակը՝ պետք է ենթադրել, որ լուրջ փոփոխություններ Ադրբեյջանի իշխանական համակարգում, ըստ ամենայնի, չեն լինի:

Մյուս կողմից, թե՛ Միացյալ Նահանգները, թե՛ Եվրամիությունը եւ թե՛ անգամ Ռուսաստանը, շատ հավանական է, համեմատաբար երկարատեւ ժամանակահատվածի կտրվածքով, խնդրահարույց համարեն Ալիեւ-կրտսերի վարչակարգի հետ համագործակցությունը: Մասնավորապես, կարելի է այս հանգամանքով մեկնաբանել Իլհամ Ալիեւի վարչակարգի հեղինակազրկմանն ուղղված ԱՄՆ ու ԵՄ տեղեկատվական քաղաքականությունները:

Հայաստանի պարագայում հարկ է նշել, որ նախագահի պաշտոնում Իլհամ Ալիեւի գտնվելը թեււ առաջին հայացքից մեզ համար չի նվազեցնում այդ երկրի կանխատեսելիության աստիճանը, սակայն, մյուս կողմից՝ արդեն այսօր նկատելի է, որ իշխանության ղեկին նրա տեւական գտնվելը կարող է այդ երկրի համար ռեսուրսների կենտրոնացման կայուն մի ժամանակաշրջան հանդիսանալ:

¹ Երեքշաբթի՝ նոյեմբերի 8-ին, Եվրամիության անունից բնույթով նույնատիպ հայտարարություն արեց նաեւ Մեծ Բրիտանիան, որը մինչեւ այս տարվա վերջ նախագահելու է ԵՄ-ում: Ուշագրավ է, որ ամերիկա-եվրոպական այդ դիրքորոշմանը միացավ նաեւ պաշտոնական Կիւււր, որը նույնպես իր տեսակետի հիմքում դրեց վերոհիշյալ Միջազգային համատեղ դիտորդական առաքելության գնահատականը: Ուկրաինական այդ դիրքորոշումն, ըստ էության, նոր տարր է ԱՊՀ տարածքին ուղղված Կիււրի քաղաքականության մեջ, որի հիմքում ընկած է մերձբալթյան հանրապետությունների, Լեհաստանի ու Վրաստանի հետ «սեւ ծովյան-կասպյան ժողովրդավարությունների» համակարգի ստեղծման մոդելը:

² Դրա ցայտուն օրինակներից մեկն ամերիկյան ազդեցիկ National Democratic Institute-ի (NDI) դիտորդներին արգելելն էր ժամանել Ադրբեյջան՝ մոնիթորինգի ենթարկելու նոյեմբերի 6-ի խորհրդարանական ընտրությունները: Եվ դա՝ այն պարագայում, երբ ընդամենը երկու ամիս առաջ Բաքվում էր NDI-ի ղեկավար, ԱՄՆ նախկին պետքարտուղար Մադլեն Օլբրայթը, որը հանդիպել էր նաեւ նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

**ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՍԵՆԱԿ Սարուխանյան**

«Իմամ Խոմենիին ասում էր, որ սիոնիստական ռեժիմը պետք է ջնջվի աշխարհի երեսից, եւ աստծո զորության օգնությամբ շատ շուտով աշխարհը կապրի առանց ԱՄՆ-ի եւ Իսրայելի: Եթե որեւէ մեկը համաշխարհային բռնապետության ճնշմամբ կամ անմտության, եսասիրության եւ ազահության պատճառով պաշտոնապես ճանաչի Իսրայելյան ռեժիմը, այդ մարդը կայրվի իսլամական ցասման հնոցում»: Այսպիսի աղմկահարույց հայտարարությամբ հոկտեմբերի 27-ին կայացած «Աշխարհն առանց սիոնիզմի» համաժողովում հանդես եկավ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Մահմուդ Ահմադի Նեժադը:

Իրանի շուրջ ստեղծված իրադրության վերլուծությունն առաջին հայացքից հարկադրում է մտածել այն մասին, որ Ահմադի Նեժադը խիստ անժամանակ է արել այս ագրեսիվ հայտարարությունը:

Նախ՝ նոյեմբերի վերջին տեղի է ունենալու ԱԷՄԳ Կառավարիչների խորհրդի հերթական նիստը, որտեղ որոշվելու է ՄԱԿ Անվտանգության խորհրդին Իրանի միջուկային «թղթապանակի» հանձնման կամ չհանձնման հարցը: Թվում է, թե Իրանը ջանում է համոզել միջազգային հանրությանը, որ ցանկություն չունի միջուկային զենք ստեղծել, եւ միջուկային ծրագիրն էլ զարգացնում է բացառապես խաղաղ նպատակներով: Ահմադի Նեժադի հայտարարությունն Իսրայելի եւ ԱՄՆ ոչնչացման անհրաժեշտության մասին կասկածի տակ է դնում Իրանի՝ միջուկային ծրագրի բացառապես խաղաղ բնույթի մասին հավաստիացումները:

Երկրորդ՝ Իրանի նախագահն իր ելույթով ուժեղ հարված հասցրեց այն երկրների դիրքորոշումներին, որոնք փորձում են խանգարել ՄԱԿ ԱԽ-ին Իրանի միջուկային «թղթապանակի» հանձնմանը:

Երրորդ՝ «աշխարհի երեսից Իսրայելը ջնջելու» հայտարարությունը փաստարկված է դարձնում ԱՄՆ եւ Մեծ Բրիտանիայի մեղադրանքներն այն մասին, թե Իրանն ահաբեկչական պետություն է: Ահմադի Նեժադի հայտարարությունը հեշտությամբ կարելի է ներկայացնել որպես ահաբեկչական, քանի որ այն բավական մասն է այնպիսի կազմակերպությունների համանման հայտարարություններին, ինչպիսին «Ալ-Կաիդան» է:

Ահմադի Նեժադի հայտարարության վերը թվարկված բացասական հետեւանքները շատերի մոտ հարց են առաջացրել նրա հնչեցրած սպառնալիքների նպատակահարմարության մասին: Շատերն սկսեցին Իրանի նախագահի ելույթը բացատրել նրա անփորձությամբ, մյուսները՝ «Աշխարհն առանց սիոնիզմի» համաժողովի սրահում տիրող հուզական մթնոլորտով եւ այլն:

Ըստ մեզ՝ Ահմադի Նեժադի հայտարարությունը ծրագրված էր եւ Իրանի ղեկավարության նոր արտաքին քաղաքական գծի բաղադրատարր է հանդիսանում, որը մենք պայմանականորեն կանվանենք *«քաղաքական արագացման գիծ»*:

Ասվածը հիմնավորելու համար մեջքերում կատարենք Եվրոպայի գլխավոր «հակահարեկչի»՝ Մեծ Բրիտանիայի վարչապետ Թ.Բլերի հարցազրույցից, որ նա տվել է հոկտեմբերի 26-ին «SKY NEWS» հեռուստաալիքին, ոչ թե Իրանի նախագահի հայտարարությունից հետո, այլ նախօրեին. *«Իրանը պետք է հասկանա. նա ունի Արեւմուտքի հետ այլ հարաբերություններ ունենալու հնարավորություն: Բայց միայն մի քանի շատ որոշակի պայմանների դեպքում: Նախ՝ Իրանը թողնում է Իրաքին զարգանալ այնպես, ինչպես նա է ուզում: Երկրորդ՝ Իրանը դադարեցնում է աջակցությունն ահաբեկչությանը՝ որտեղ էլ որ այն լինի: Եվ երրորդ՝ Իրանը կատարում է ատոմային էներգիայի եւ միջուկային զենքի վերաբերյալ միջազգային պարտավորությունները: Հակառակ պարագայում նրանք պետք է հասկանան, որ այդ ժամանակ իրենց հետ կլինեն այլ հարաբերություններ: Իսկ ... եթե նրանք անտեսեն միջազգային հանրության վարքի կանոնները, ապա իրենց կյանքն ավելի քան կբարդանա»*:

Բրիտանական վարչապետի առաջադրած բոլոր պայմանները գրեթե բառացիորեն հիշեցնում են այն պահանջները, որոնք ԱՄՆ-ը եւ նույն Մեծ Բրիտանիան ժամանակին ներկայացրին Իրաքին: Այդ պայմանները թելադրվում են երկու ունիվերսալ մեղադրանքներից ելնելով, որոնք ԱՄՆ-ը եւ Մեծ Բրիտանիան ներկայացնում են իրենց անցանկալի վարչակարգերին. աջակցությունն ահաբեկչությանը եւ զանգվածային ոչնչացման զենքի ստեղծում:

Սակայն Իրանի շուրջ ստեղծված իրադրությունն Իրաքի համեմատությամբ ունի մի շարք տարբերիչ գծեր: Այդ տարբերությունները, որոնք կթվարկենք ստորեւ, այն բանի հիմնական պատճառներն են, որ մինչ այժմ թույլ չեն տվել Իրանի դեմ իրականացնել «իրաքյան սցենարը».

1. Իրաքի ներքաղաքական իրադրությունն այսօր մեծ մասամբ զարգանում է այդ երկրում Իրանի դերի եւ ազդեցության հաշվառմամբ:

Կարելի է ասել, որ Իրանն ակտիվորեն մասնակցում է Իրաքի գերազանցապես շիա կառավարության քաղաքականության ձեւավորմանը: Իրանի այս դիրքորոշումը ճիշտ հաշվարկի արդյունք է, այն է՝ ա) աջակցություն Իրաքի ժողովրդավարությանը, որն ապահովում է Իրաքյան կառավարությունում Իրանի նկատմամբ լոյալ շիա կուսակցությունների գերիշխանությունը, բ) աջակցություն ներքին անկայունությանը եւ պարտիզանական շարժմանը, ինչը թույլ չի տալիս ԱՄՆ-ին հասնել երկրում լիակատար ռազմական վերահսկողության եւ, միեւնույն ժամանակ, հարկադրում է նրան ավելի շատ հենվել այդ նույն Իրաքյան, գերազանցապես՝ շիա վարչակազմի վրա:

2. Մեծ մասամբ Իրանի Իրաքյան քաղաքականության շնորհիվ է, որ ԱՄՆ-ը «խրվել-մնացել» է այդ երկրում: Եվ որքան շատ հիմնախնդիրներ ունենան ամերիկացիներն Իրաքում, այնքան Իրանում «ժողովրդավարություն հաստատելու» քիչ հնարավորություն կունենան:

3. Իրաքյան իրադրությամբ են մեծ մասամբ պայմանավորված նավթի համաշխարհային բարձր գները, ինչն էլ ավելի է ամրապնդում Իրանի դիրքերը. նախ՝ այդ գները նվազագույնի են հասցնում Իրանի դեմ պատերազմի կամ նրան հարվածելու հնարավորությունը, քանի որ նավթի գներն էլ ավելի կբարձրանան, երկրորդ՝ նվազագույնի են հասցնում ՄԱԿ ԱԽ կողմից Իրանի դեմ տնտեսական պատժամիջոցների կիրառումը, քանի որ այդ պատժամիջոցները կարող են մտցվել, առաջին հերթին, Իրանի նավթային հատվածի նկատմամբ: Իսկ իրանական նավթի արտահանման նկատմամբ պատժամիջոցները եւս մեկ, ընդ որում՝ հիմնավոր պատճառ են նավթի գների բարձրացման համար, ինչին համաշխարհային տնտեսությունը մեծ դժվարությամբ կդիմանա:

4. Իրանը, ի տարբերություն սադամյան Իրաքի, իրական մեծ ազդեցություն ունի պաղեստինյան եւ լիբանանյան այնպիսի կազմակերպությունների վրա, ինչպիսիք են «Հիզբալլահը» եւ «Համասը», եւ պատերազմն Իրանի դեմ կհանգեցնի նրանց գործունեության ակտիվացմանը, ինչը հարվածի տակ կդնի կայունությունը Լիբանանում եւ Իսրայելի անվտանգությունը:

Ելնելով վերն ասվածից՝ կարելի է պայմանականորեն ուրվագծել Իրանի դեմ պատերազմի հիմնական հետեւանքները.

❖ *Ապակայունացում Իրաքում.* հնարավոր է քաղաքացիական պատերազմ: Անգլո-ամերիկյան զինվորական համակազմի մեծ կորուստներ: Հնարավոր է երկրի նկատմամբ վերահսկողության կորուստ:

❖ *Նավթի բարձր գներ.* էներգետիկ եւ տնտեսական հնարավոր համաշխարհային ճգնաժամ:

❖ *Ապակայունացում Մերձավոր Արեւելքում.* ահաբեկչական սպառնալիքի ուժեղացում: Ահաբեկչություններ Իսրայելի եւ ամերիկյան քաղաքացիների դեմ: Ամերիկյան դեսպանատների եւ ներկայացուցչությունների պայթեցումներ:

Այս ամենն ակնհայտորեն նվազագույնի է հասցնում Իրան «Ժողովրդավարության արտահանման» հնարավորությունը: Այնպես որ՝ կարելի է եզրակացնել, թե Իրանն այսօր բավական վստահ է զգում իրեն, եւ Իրանի նախագահը չպետք է նման վտանգավոր հայտարարություններ աներ Իսրայելի ոչնչացման ծրագրերի մասին: Սակայն, թերեւս, այնքան էլ այդպես չէ:

Թ.Բլեյրի առաջադրած պայմաններն Իրանի համար բավականաչափ կարելուր եւ հետաքրքիր տեղեկություն են պարունակում: Ի՞նչ է պահանջում Մեծ Բրիտանիայի վարչապետն Իրանից:

1. Պահանջվում է, որպեսզի Իրանը հեռանա Իրաքից եւ թույլ տա ԱՄՆ-ին ու Մեծ Բրիտանիային վերջնականապես հաստատվել այդ երկրում: Անհնար է, որ Իրանը հեռանա, քանի որ դա կնշանակի ԱՄՆ-ին անհամաչափ հարվածելու հիմնական միջոցի կորուստ՝ վերջինիս ԻԻՀ ներխուժման դեպքում: Այս պայմանն, ըստ էության, անիրականանալի է:

2. Չաջակցել ահաբեկչությանը՝ որտեղ էլ որ այն լինի: Ոչ մի որոշակի բան, ոչ մի անվանում, ոչ մի վկայություն: Ունիվերսալ մեղադրանքի բնորոշ օրինակ: Նման մեղադրանք-պահանջի տարբերակիչ գիծը անիրականանալիությունն է՝ անորոշ լինելու պատճառով:

3. Չստեղծել միջուկային զենք: Ի տարբերություն ֆրանսիացիների, որոնք ԻԻՀ-ից պահանջում են փակել որոշակի ձեռնարկություններ, օրինակ՝ Սպահանի ուրանի փոխակերպման գործարանը, Մեծ Բրիտանիան կրկին առաջ է քաշում անորոշ եւ, բնականաբար, անիրականանալի պայման:

Ի՞նչ են իրականում ուզում ամերիկացիներն ու բրիտանացիները: Նրանց, ըստ էության, պետք չէ, որ Իրանը հրաժարվի իր միջուկային ծրագրից, նրանց պետք չէ ժողովրդավարությունն Իրանում: Նրանց պետք է *ժամանակ՝*

❖ Իրաքում իրադրության կարգավորման համար, այդ թվում՝ Իրաքի շիա պաշտոնյաներին կաշառելու եւ ապստամբների խմբերը վերացնելու միջոցով,

❖ նավթի գների կարգավորման համար,

❖ որպեսզի Ռ.Յարիրիի սպանության հետաքննությունը հանգեցնի Լիբանանի լիակատար «անջատմանը» Իրանի դաշնակից Սիրիայից, իսկ

Լիբանանի հակասիրիական տրամադրությունները ամրապնդեն լիբանանյան ղեկավարության արեւմտամետ քաղաքականությունը, ինչը հետագայում կհանգեցնի մերձավորարեւելյան իրանամետ գլխավոր գործոնի՝ «Հիզբալլահ» կազմակերպության գործունեության սահմանափակմանը կամ ոչնչացմանը: Դրանով իսկ Իրանը կգրկվի ամերիկյան ներխուժման անհամաչափ պատասխանի եւս մեկ միջոցից:

Պարզ է, որ այս նպատակներին հասնելու համար ԱՄՆ-ին եւ նրա դաշնակիցներին ժամանակ է հարկավոր: Այդ ընթացքում Իրանին կներկայացվեն հերթական մեղադրանքները, իրավիճակը կշարունակեն անվանել տագնապալի, կծեւակերպվեն ԱԷՄԳ հերթական բանաձեւերը եւ այլն: Եվ այս ամենը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ ԱՄՆ ուժերը չեն բավականացնի «իրանական հիմնախնդրի» ռազմական լուծման համար:

Փաստորեն, Մահմուդ Ահմադի Նեժադը զրկում է ԱՄՆ-ին այդ թանկարժեք ժամանակից: Նա «արագացնում» է ժամանակը՝ պահանջելով լուծել «իրանական հիմնախնդիրը» ոչ թե հետագայում, այլ հիմա: Այսինքն՝ նա պահանջում է, որ իրավիճակի կարգավորման նպատակով իր հետ պայմանավորվեն այժմ: Հասկանալի է, որ հիմնախնդրի լուծումն այսօր այլ կլինի, քան ասենք 5 տարի անց: Իրանի հետ այսօր կարելի է միայն պայմանավորվել. 5 տարի անց, թերեւս, հարցը կարելի կլինի լուծել բոլորովին այլ կերպ:

Իրանի նախագահի հայտարարությունը «Իսրայելի ոչնչացման» պատրաստականության մասին ժամանակի «արագացման» քաղաքականության գլխավոր բաղադրիչն է: Մահմուդ Ահմադի Նեժադը չի փորձում հունանիստ կամ «քաղաքակրթությունների երկխոսության» կողմնակից ձեւանալ: Նա ցանկանում է եւ սկսել է հանդես գալ իբրեւ արմատական եւ չի թաքցնում իր ագրեսիվությունը՝ բացահայտորեն սպառնալով բոլորին: ԱՄՆ-ը չէ, որ նրան դարձնում է այդպիսին: Նա ինքն է իրեն այդպիսին դարձնում՝ պահանջելով արագացնել «իրանական հիմնախնդրի» լուծումը, հասկանալով, որ այսօր ընդունված որոշումը որակապես կտարբերվի այն որոշումից, որը կարող է ընդունվել ավելի ուշ:

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՄԱՅՄԵԴԱԿԱՆ
ԸՆԴՎՁՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
Փագիկ Տեր-Չարությունյան**

Արդեն տեւական ժամանակ է, ինչ Ֆրանսիայում եւ հարակից երկրներում շարունակվում են մահմեդականների զանգվածային անկարգությունները: Չնայած նրան, որ ֆրանսիական իշխանությունները արտակարգ իրավիճակ են հայտարարել, անկարգությունները (որոնք ներառել են նաեւ Բելգիան, Գերմանիան) շարունակվում են: Կատարվածը դեռ երկար է իրեն զգալ տալու. զուտ տնտեսական առումով ֆրանսիացիները կրել են միլիարդանոց վնասներ, եվրոն անկում է ապրում, անբարենպաստ են նաեւ քաղաքական կանխատեսումները: Իրադարձությունները տալիս են որոշակի պատկերացումներ, թե ինչ կարող է տեղի ունենալ Եվրոպայում, երբ մահմեդական տարրը կազմի բնակչության 20-30%-ը: Այս առումով ուշագրավ է արձակագիր Ելենա Չուդինովայի «Փարիզի Աստվածամոր մզկիթը» կոչվող ուտոպիական երկը, որտեղ դեպքերը զարգանում են 2048 թվականին. Եվրամիությունը վերանվանվել է Եվրասիլամի, իսկ իսլամ չընդունած եւ փոքրամասնություն կազմող ֆրանսիացիները բնակվում են գետտոներում:

Եվրոպայում կատարվածն ունի իր օբյեկտիվ պատճառները: Մահմեդական տարրի հայտնվելը Եվրոպայում պայմանավորված էր էժան աշխատուժի պահանջարկով: Արդյունքում՝ այսօր Ֆրանսիայում մահմեդական համայնքն իր թվաքանակով գրավում է երկրորդ տեղը կաթոլիկներից հետո եւ գերազանցում է բողոքականներին, իսկ մահմեդականների ընդհանուր թիվն այդ երկրում պաշտոնական տվյալներով կազմում է մոտ 5 մլն (որոնցից 800 հազարը Ալժիրից են, 1 մլն՝ Մարոկոյից եւ Թունիսից, 350 հազարը թուրք են եւ այլն): Ոչ պաշտոնական տվյալներով՝ մահմեդականների թվաքանակը հասնում է մինչեւ 10 մլն-ի: Երկրում գործում են մոտ 1500 մզկիթ եւ 2000 իսլամական կազմակերպություններ, որոնց դերը մեծ է ոչ միայն մահմեդական համայնքներում: Իսլամի քարոզչությունը հանգեցնում է նրան, որ քրիստոնյա ֆրանսիացիներն անզամ հավատափոխ են լինում:

Չայտնի է, որ մահմեդականները ներկայացնում են հասարակության անապահով շերտը, որտեղ սոցիալական լարվածությունն ավանդաբար բարձր է: Սակայն, բացի սոցիալական գործոններից, առկա է նաեւ

միջէթնիկական թշնամանքը: Չպետք է իդեալականացնել նաեւ բուն ֆրանսիական հանրությունը, որի մի մասի մոտ ռասայական խտրականությունը եւ կրոնական անհանդուրժողությունը բավական սուր են արտահայտված (այդ երկրում տարածում է գտել նաեւ հակասեմիտիզմը): Սակայն վերջին շաբաթներին տեղի ունեցածը դժվար է որակել որպէս միայն սոցիալական անապահովությամբ, կրոնական ու էթնիկական անհանդուրժողությամբ պայմանավորված տարերային ապստամբություն:

Եվրոպական մահմեդականների ներկայիս գործելաձեւը վկայում է, որ «անկարգություններն» իրագործվում են միջազգային ահաբեկչական կազմակերպություններին բնորոշ մեթոդներով. հրձիգ խմբերն արագ տեղաշարժվում են, կիրառում պարտիզանական «ծակոցային» մարտավարություն, գործողությունների վերաբերյալ հրահանգները ստանում են Ինտերնետի միջոցով, կազմակերպչական հիմունքները ցանցային են եւ այլն:

Մահմեդական հանցագործ տարրն անցյալում էլ ունեցել է ընդհարումներ ոստիկանության հետ, սակայն նախկինում ընդհարումները երբեւիցէ չէին հանգեցրել զանգվածային գործողությունների եւ դրանցից բխող քաղաքական ու տնտեսական ծանր հետեւանքների: Այս ամենը թույլ է տալիս մտածելու, թէ չի կարելի բացառել, որ այսօր Ֆրանսիայում եւ եվրոպական այլ երկրներում կատարվող իրադարձությունները կարող են հրահրված լինել կամ էլ արդեն ընթացքում ուղղորդվել այլ ուժերի կողմից:

* * *

Ցանկացած քաղաքական իրադարձություն վերլուծելու պարագայում նպատակահարմար է առանձնացնել այն դերակատարներին, որոնք կարող են կամ որոնց ինչ-որ նկատառումներով ձեռնտու է իրագործել այս կամ այն գործողությունը: Այս տեսանկյուններից որպէս մահմեդական երիտասարդության ընդվզման կազմակերպիչներ կամ դրա ընթացքում նրանց աջակիցներ եւ ուղղորդողներ՝ առաջին հերթին կարող են հանդիսանալ միջազգային իսլամական ահաբեկչական կենտրոնները, որոնք, անկասկած, ունեն իրենց կառույցները եվրոպական համայնքներում:

Ընդունված է համարել, որ իսլամական ծայրահեղականների գործողությունների հիմնական նպատակը «անհավատ» Արեւմուտքի (հատկապէս ԱՄՆ-ի) եւ «սատանայական» Իսրայելի դեմ պայքարն ու համաշխարհային խալիֆաթի ստեղծումն է: Այդ առումներով Ֆրանսիան գուցէ եւ կարող է իսլամիստների համար թիրախ հանդիսանալ, եւ

քննարկվող իրադարձությունները կարելի է գնահատել որպես իսլամիստների կողմից «ուժի եւ հնարավորությունների ցուցադրում»: Այստեղ պետք է հաշվի առնել նաեւ այն դժգոհությունները, որոնք ծագել էին մահմեդական համայնքում՝ ֆրանսիական դպրոցներում գլխաշորեր (հեջաբներ) կրելու արգելքի կապակցությամբ: Սակայն թվում է, թե Իրաքի խնդրում Ֆրանսիայի անհամաձայնությունն ամերիկյան քաղաքականության հետ կարծես ինչ-որ չափով (բայց ոչ ամբողջովին) ապահովագրել էր Ֆրանսիային ահաբեկիչների հարվածներից: Կարելի է ընդունել, որ խռովություն իրագործողները կազմակերպված իսլամական ծայրահեղականներն են: Այլ խնդիր է, թե ովքեր են փորձում զարգացնել արդեն իսկ ընթացող անկարգությունները:

Մահմեդականների խռովության աջակիցներ եւ ուղղորդողներ կարող են հանդիսանալ այն տերությունների հատուկ ծառայությունները, որոնք պայքարում են գլոբալ ահաբեկչության դեմ եւ իրենց գործառույթների առանձնահատկությունից ելնելով՝ կարող են ազդեցության լծակներ ունենալ ահաբեկչական կառույցներում:

Նման կարողություններ ունեցող տերությունների շարքում, նաեւ վրեժխնդրական մոտիվների առումով, կարելի է առանձնացնել Թուրքիան: Ֆրանսիան այդ երկրին ԵՄ ընդունելու հիմնական ընդդիմադիրներից է, իսկ անկարգությունների կապակցությամբ վարչապետ Էրդողանի վերջերս արած հայտարարությունը մահմեդական գործոնի թերագնահատման վերաբերյալ կարելի է մեկնաբանել որպես կշտամբանք ֆրանսիական իշխանություններին: Սակայն լրատվական հոսքերից հետեւում է, որ անկարգությունները կատարում են ոչ թե թուրքերը (որոնք ավանդաբար կապված են Թուրքիայի անվտանգության մարմինների հետ), այլ Չյուսիսային Աֆրիկայի երկրների արաբները:

Ֆրանսիական իրադարձությունների համատեքստում առանձնակի ուշադրության են արժանի ԱՄՆ, Մեծ Բրիտանիայի եւ Իսրայելի հատուկ ծառայությունները: Դրանք հաճախ գործում են համատեղ եւ, անշուշտ, ունեն անհրաժեշտ կարողություններ ու կարծես՝ նաեւ դրդապատճառներ: Հայտնի է, որ Ֆրանսիան արեւմտյան այն տերությունն է, որը, լինելով ՄԱԿ Անվտանգության խորհրդի մշտական անդամ, գլոբալ «հակաահաբեկչական պատերազմի» եւ Իրաքի հիմնախնդրի հարթությունում շարունակաբար հակադրվում է ԱՄՆ եւ նրա մերձավոր դաշնակիցների՝ Մեծ Բրիտանիայի եւ Իսրայելի քաղաքականությանը: Համաձայն ֆրանսիական մոտեցումների, ահաբեկչության դեմ պայքարը միայն ուժային մեթոդներով քաղաքական հեռանկար չունի: Ֆրանսիան նաեւ եվրակենտրոն եւ ոչ ատլանտյան ԵՄ-ի հիմնական գաղափարախոսն է: Այս համատեքստում

կարելի է որպես վարկած ընդունել, թե ԱՄՆ-ին ձեռնտու կլիներ զրկել Ֆրանսիային հիմնավորումներից՝ ուղղված ամերիկյան գլոբալ հակա-ահաբեկչական ռազմավարության դեմ. այս համատեքստում զանգվածային անկարգությունները կարծես թե նպաստավոր են ամերիկյան կողմի համար: Վերը բերված նկատառումների հարթությունում ուշագրավ է թվում հետևյալ տեղեկատվությունը:

Չամաձայն ամերիկյան «Յունան Րայթս Վաչ» հայտնի իրավա-պաշտպան կազմակերպության տվյալների, ԱՄՆ հատուկ կառույցները ստեղծել են գաղտնի բանտերի ցանց Արևելյան Եվրոպայում, մասնավորապես՝ Լեհաստանում եւ Ռումինիայում, որտեղ ամերիկացիները հարցաքննում են ձերբակալված ահաբեկիչներին (նման երկրների շարքում բերվում է նաեւ Ադրբեջանի անունը): Չրապարակված տեղեկու-թյունները հիմնված են Աֆղանստանից Եվրոպա հատուկ չվերթներով կատարված ինքնաթիռների թռիչքային փաստաթղթերի վերլուծության վրա: Չատկանշական է, որ ամերիկյան իշխանությունները փաստորեն ո՛չ ժխտում, ո՛չ էլ հաստատում են այդ մեղադրանքները, իսկ Եվրոպացիների մերժողական հայտարարություններն առայժմ մերկապարանոց են եւ այդ իսկ պատճառով համոզիչ չեն թվում:

Չատկանշական է, որ վերոհիշյալ հաղորդագրություններին զուգա-հեռ, ԱՄՆ փոխնախագահ Դիկ Չեյնին կոչ է արել Սենատին՝ թույլատրել հատուկ ծառայություններին ահաբեկիչներին հարցաքննելիս կիրառել կտտանքներ: Չեյնիի հայտարարությունը կարելի է գնահատել իբրեւ փորձ՝ լեգիտիմացնելու այն, ինչն իրականում արդեն կատարվում է ահաբեկիչ բանտարկյալների հետ. փաստագրական տվյալները վերջին-ներիս կտտանքների ենթարկելու մասին իրաքյան բանտերում եւ Գուանտանամոյի համակենտրոնացման ճամբարում ավելի քան շատ են: Չիչենք նաեւ, որ ամերիկացիներն ի սկզբանե անում են ամեն ինչ, որպեսզի ձերբակալված ահաբեկիչներին տեղակայեն ԱՄՆ սահմաններից դուրս (օրինակ՝ նույն Գուանտանամոյում), այսինքն՝ այնտեղ, ուր չեն գործում ամերիկյան իրավական նորմերը: Այսպիսով, կարելի է փաստել, որ ձերբակալված ահաբեկիչներին ենթարկում են ֆիզիկական եւ հոգեբա-նական կտտանքների, ինչը սկզբունքորեն թույլ է տալիս ոչ միայն կորզել անհրաժեշտ տեղեկատվությունը, այլեւ «կոտրել» եւ հավաքագրել հարցաքննվողին:

Վերոհիշյալ փաստերը թույլ են տալիս մտածելու, որ ԱՄՆ եւ նրա դաշնակիցների հատուկ ծառայությունները ի զորու են ոչ միայն պայ-քարել ահաբեկիչների դեմ, այլեւ նրանց հավաքագրել եւ օգտագործել հատուկ, այդ թվում նաեւ Ֆրանսիայի դեմ ուղղված գործողություններում:

Նման մոտեցումը համապատասխանում է հատուկ ծառայությունների գործելակերպի տրամաբանությանը: Համաձայն մի շարք վերլուծաբանական վարկածների, երկակի տեխնոլոգիայի արդյունք էր նաև 2001թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը՝ իր հայտնի հետեւանքներով: Ժամանակին նման մեթոդներ էին կիրառում ցարական «օխրանկան» եւ խորհրդային ԿԳԲ-ն, հայտնի են բրիտանական եւ իսրայելական ծառայությունների բազմաթիվ սադրիչ գործողությունները: Ընդհանրապես պետք է փաստել, որ ցանկացած քաղաքական հնչողություն ունեցող խոշոր իրադարձությունում այս կամ այն չափով պետք է որ իրենց «ներդրումն» ունենան հատուկ ծառայությունները:

Բոլոր պարագաներում, ովքեր էլ որ լինեն Եվրոպան համակած անկարգությունների կազմակերպիչները եւ սատարողները, կարելի է փաստել՝ նրանք հասել են իրենց նպատակին. Ֆրանսիական իշխանությունները, նրանց քաղաքական ռազմավարությունը ահաբեկչության խնդրի նկատմամբ այսօր վարկաբեկված են, իսկ այդ երկրի գրավչությունը էապես նվազել է: Եվրոպայի առաջատարի նկատմամբ թերահավատությունը տարածվում է ԵՄ եւ, ընդհանրապես, ի լրումն՝ Եվրասիանադրության տապալման, համաեվրոպական գաղափարների վրա: Այս ամենը պետք է որ ավելի «փափկացնի» Ֆրանսիայի կողմից որդեգրված հակաստլանտյան քաղաքականությունը:

Միեւնույն ժամանակ, այս ամենն առիթ է հանդիսանում լրացուցիչ խորհելու Եվրոպայի ապագա ժողովրդագրական փոփոխությունների մասին, ինչը կանդրադառնա ոչ միայն ԵՄ, այլեւ նրա «նոր» հարեւանների ազգային անվտանգության վրա:

**«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ», ԹԵ՞ «ԺԱՆՐԻ ՃԳՆԱԺԱՍ»
Դավիթ Յովհաննիսյան**

Արդյո՞ք այն ամենը, ինչ տեղի է ունենում ներկայումս աշխարհում, կապված է տարբեր քաղաքակրթությունների (արժեհամակարգերի) զենետիկական անհամատեղելիության հետ: Թե՞ հարցը վերաբերում է սեփական ինքնության (էության) պաշտպանությանը, որն այն կրողների տեսակետից վտանգված է:

Կամ էլ, միգուցե հիմնախնդիրն այն է, որ արժեքների մրցակցության տեսքով մեզ են ներկայացվում միայն մաքուր շահերը, եւ հենց դրանք են բախվում, այլ ոչ թե մարդկային էությունները:

Հասկանալի է, որ անհամատեղելի լինելը (եթե նման բան իրոք գոյություն ունի) երբեք չի արտահայտվում ուղղակիորեն, այլ հանդես է գալիս տարբեր քողերի տակ:

«Սադան Յուսեյնի Իրաքում զանգվածային ոչնչացման զենք է թաքցվում»։ այս մեղադրանքով սկսվեց մի հսկայական քարոզչական գործողություն, որի նպատակն էր պատրաստել համաշխարհային եւ, հատկապես, ամերիկյան հասարակական կարծիքը ամերիկյան բանակի Իրաք ներխուժելուն: Ի տարբերություն սառը պատերազմի ժամանակների, համաշխարհային կարծիքն առանձնապես ձգտում չցուցաբերեց՝ գործողությունների նման զարգացմանը հավանություն տալու:

Ավելին, Միացյալ Նահանգներից, որն անվարան կատարում էր համաշխարհային միակ առաջնորդի իր ստանձնած դերը, նրա դաշնակիցները պահանջեցին, որպեսզի Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի առկայության վերաբերյալ իր ունեցած բոլոր գաղտնի նյութերը տրամադրի միջազգային կարգավիճակ ունեցող մասնագետներին, որից հետո միայն ՄԱԿ-ը պետք է քննարկեր հարցը եւ որոշում կայացներ:

Թվում է, թե նախկինում բոլորի համար ընդունելի այս գործելակերպը, որը հիմնավորվում է միջազգային օրենքների եւ նորմերի դրույթներով, իմաստ ուներ պահպանել նաեւ սառը պատերազմից հետո: Սակայն Միացյալ Նահանգներն այլ որոշում կայացրեց՝ ձգտելով ավելի հստակ կերպով հայտարարել եւ ամրագրել իր՝ որպես համաշխարհային միակ եւ բացարձակ առաջնորդի, կարգավիճակը: Չկարողանալով հաղթահարել մի շարք մեծ տերությունների դիմադրությունը ՄԱԿ-ում՝ ԱՄՆ-ը միանձնյա

որոշում ընդունեց իր գործերը Իրաք մտցնելու վերաբերյալ եւ այդ քայլին միջազգային դիմադրության առկայությունը քողարկելու նպատակով նախաձեռնեց կոալիցիայի ստեղծումը՝ այն հաջողեցնելու համար դիմելով այլ պետությունների նկատմամբ ուղղակի ճնշումների՝ մի կողմից, եւ գայթակղելով նրանց տարբեր տիպի քաղաքական եւ տնտեսական դիվիդենտներով՝ մյուս կողմից:

Միաժամանակ, Միացյալ Նահանգները նպատակասլացորեն սկսեց խորացնել ներկայիս ռազմաքաղաքական եւ սոցիալ-տնտեսական գործընթացների ոլորտում ՄԱԿ կատարած աշխատանքների անբավարար եւ ոչ համարժեք լինելու մասին արդեն իսկ գոյություն ունեցող կասկածները:

Սակայն, ինչպես ցույց տվեց ժամանակը, այդպիսի գործելակերպը ոչ միայն չհանգեցրեց հաջողության, այլ նաեւ բազմաթիվ խնդիրների առջեւ կանգնեցրեց նախագահ Ջորջ Բուշի վարչակազմին. խորացան ԱՄՆ հակասությունները ՆԱՏՕ եվրոպական դաշնակիցների հետ, ավելի ընդգծվեցին գոյություն ունեցող բաժանարար գծերը մուսուլմանական աշխարհի, Չինաստանի եւ մի շարք այլ երկրների հետ, վարչակազմը Ամերիկայի ներսում զրկվեց հասարակական աջակցությունից:

Այդ իսկ պատճառով Սիրիայի եւ Իրանի նկատմամբ Միացյալ Նահանգների գործողությունների բնույթը ներկայումս բոլորովին այլ է:

Լիբանանի վարչապետ Ռաֆիկ Չարիրիի սպանության հետաքննության համար ստեղծված միջազգային փորձագետների հանձնաժողովի կազմի մեջ են մտնում 17 պետությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի նախագահը ներկայացնում է Գերմանիան, այսինքն՝ մի երկիր, որը Ֆրանսիայի հետ միասին ղեկավարեց Իրաքի նկատմամբ ամերիկյան քաղաքականության ընդդիմությունը: Սիրիայի վերաբերյալ միջազգային քաղաքականության ձեւավորման խնդիրը (հիշեցնենք, որ հենց այս երկրի գաղտնի ծառայություններն են մեղադրվում Ռաֆիկ Չարիրիի սպանությունը կազմակերպելու մեջ) դրվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի նիստում, եւ Միացյալ Նահանգները համաձայնել է մյուս երկրների առաջարկի հետ, որ պատժամիջոցների վերաբերյալ որոշումներ կարող են ընդունվել միայն հանձնաժողովի վերջնական եզրակացության հրապարակումից հետո:

Իրանի միջուկային ծրագրերի հարցում Վաշինգտոնը, կամա թե ակամա, վերջին շրջանում նույնպես ձգտում է բարդ բանակցային գործընթացները վարել արեւմտաեվրոպական երկրների միջոցով կամ մասնակցությամբ, ինչը հատկապես կարեւոր է դարձել ԱԷՄԳ բավական հստակ եւ կոշտ դիրքորոշում զբաղեցնելուց հետո:

Այս բոլոր ակներեւ կամ հազիվ նկատելի փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ամերիկյան արտաքին քաղաքականության մեջ, վկայում են այն մասին, որ Վաշինգտոնը լրջորեն անհանգստացած է իր գործողությունների նկատմամբ երկրի ներսում եւ աշխարհում աճող դիմադրությամբ, ինչը հաճախ ընդգծված հակաամերիկյան ցույցերի եւ ակցիաների միջոցով է արտահայտվում: Այդ տեսակետից չափազանց հատկանշական էին «Երկու Ամերիկաների հանդիպման» ընթացքում թե՛ հակազլոբալիստների ցույցերը՝ Վենեսուելայի նախագահ Չավեսի եւ Մարադոնայի հակաբուշական ու հակաամերիկյան ելույթներով, թե՛ այն փաստը, որ Միացյալ Նահանգները չկարողացավ իր ուզած համաձայնագիրը ստորագրել տալ:

Արդյո՞ք այս ամենը նշանակում է, որ Միացյալ Նահանգները վերանայում է իր քաղաքականությունը, որպեսզի նոր, ավելի ընդունելի լուծումներ գտնի միանձնյա պատասխանատվությունից խուսափելու եւ կոլեկտիվ պատասխանատվության՝ ժամանակի պահանջներին համահունչ բանաձեւ գտնելու համար:

Համեմայնդեպս, ներկա վարչակազմի իշխանության օրոք քաղաքական գծի նման հիմնարար փոփոխությունը թվում է անհավանական, քանի որ այն իր առջեւ դրել է իր տեսակետից կարեւորագույն մի խնդիր՝ ապահովել ԱՄՆ բացարձակ գերիշխանությունն աշխարհում, որը պետք է ապահովվի «նոր աշխարհակարգի» օրենքներով: Իսկ այդ նպատակին հասնելու համար Միացյալ Նահանգները պետք է բացարձակ վերահսկողություն ապահովի աժխաջրածնային հումքի բաշխման համակարգի վրա, քանի որ ժամանակակից տնտեսությունը չի կարող վստահ եւ դիմամիկ զարգացում ունենալ, եթե ապահովված չէ էներգիայի բավարար քանակներով՝ զոմե միջնաժամկետ պլանավորման կտրվածքով: Այդ հիմնահարցի լուծման պատասխանատվությունն ստանձնելով՝ վաշինգտոնյան քաղաքականությունը պարտավոր է դառնում ապահովել ամերիկյան ներկայությունը բոլոր գազանավթային պաշարներով հարուստ երկրներում, ինչը նշանակում է, որ Միացյալ Նահանգները հետեւողականորեն ձգտելու է հաստատվել թե՛ Սիրիայում, թե՛ Իրաքում, թե՛ Իրանում, թե՛ Վենեսուելայում՝ իր նպատակներին հասնելու համար օգտագործելով սեփական հսկայական զինանոցում եղած բոլոր միջոցները: Խոսքը վերաբերում է ոչ այնքան ռազմաքաղաքական միջոցներին, որքան, նախեւառաջ, էքսպանսիայի քաղաքակրթական բաղադրիչին:

Ներկայիս վաշինգտոնյան վարչակազմի՝ քաղաքակրթական հիմնարար արժեքների տարածման սկզբունքից նահանջելը, մեր կարծիքով,

ազդարարում է, այսպես կոչված, «ժանրի ճգնաժամ»: «ժանրի ճգնաժամը» նշանակում է, որ ամերիկյան քաղաքակրթական ազդեցության ծավալման միջոցներն այլևս չեն բավարարում գլոբալ աշխարհի առջև կանգնած խնդիրների լուծման համար, ինչը, բնականաբար, պահանջում է նոր միջոցների հայթայթում: Այլապես կստեղծվի նոր «ժանր», որը կտա նոր՝ ավելի խորքային արժեհամակարգ եւ նոր ձեւավորված իրավիճակին համապատասխան գործելու սկզբունքներ:

Բնականաբար, նման խնդիրներ ունեն նաեւ աշխարհի մյուս հզորները, որոնց հզորության աճին զուգահեռ աճում է նաեւ նրանց մտահոգությունը՝ հետագա զարգացումն ապահովելու համար ունենալ դարաշրջանի ոգուն համահունչ արժեհամակարգ, ինչպես նաեւ, վերոնշյալի համանմանությամբ, էներգիայի մատակարարման անկախ աղբյուրներ:

Անշուշտ, սխալ կլինի իրավիճակը ներկայացնել այնպես, թե հիմնականում տնտեսական շահերն ու դրանց բախումն են ձեւավորել ներկայիս անկայուն, վտանգավոր հետեւանքներ խոստացող իրավիճակը:

Հարցի հիմքում էական այլ պատճառներ էլ կան, որոնցից, հավանաբար, առաջնահերթն այն հիմնախնդիրն է, որի մասին դեռ անցած դարի քառասունական թվականներին նախագգուշացնում էր Ա.Թոյնբին: Խոսելով արեւմտյան քաղաքակրթության ազդեցությանը սպասող անխուսափելի հակազդեցության մասին՝ նա գրում էր. «...*հավանական է, որ մենք դեռեւս գտնվում ենք Մեքսիկայի եւ Պերուի, կամ ուղղափառ քրիստոնեության եւ իսլամի, կամ էլ Հինդուիստական աշխարհի եւ Հեռավոր Արեւելքի քաղաքակրթությունների հետ մեր քաղաքակրթության բախման պատմության առաջին գլուխներից մեկում: Մենք դեռ նոր ենք սկսել նկատել այս քաղաքակրթությունների վրա մեր ազդեցության առաջին արդյունքները, սակայն գործնականում մենք դեռ չենք տեսել մեր վրա նրանց աճող հակազդեցության հետեւանքները, որոնք, անկասկած, հսկայական են լինելու*»:

Արեւմտյան քաղաքակրթության գլոբալ ազդեցության բացարձակացման արձանագրումը Ֆրենսիս Ֆուկույաման անվանել է «*պատմության ավարտ*»: Անշուշտ, դա պատմության ավարտ չէ, այլ «ժանրի ճգնաժամ», ինչը ենթադրում է նոր «ժանրի» ծնունդ, որը հիմնված չի լինի թոյնբիական (ավելի նեղ իմաստով՝ հանտինգտոնյան) «մարտահրավերների» եւ «բախումների» տերմինաբանությամբ արտահայտվող աշխարհընկալման վրա:

Հասկանալի է, որ քանի դեռ նման կատեգորիաներով է նկարագրվելու հասարակությունների համակեցության խնդիրը, այդքան ժամանակ

սույն հիմնահարցի լուծումը տեսնվելու է «հաղթելու», «ենթարկելու», «ազդելու» մեջ, քանի որ հենց դա է պահանջում շահերի բախումը: Իսկ մշակույթների ադապտացումը ժամանակակից քաղաքակրթական համակարգին պահանջում է զգուշավոր եւ խնամքով վերաբերմունք այն առանցքային, էական հասկացություններին, որոնք սկզբունքային են անհատական, հասարակական կամ մշակութային «ես»-ի համար:

Միացյալ Նահանգները, մի կողմ դնելով հիմնադիր հայրերի իդեալիզմը եւ մոռանալով իր իսկ ստեղծման պատմության մասին, վերածվում է պատմությունից մեզ լավ ծանոթ՝ իր հզորությունից ու հարստությունից թուլացող կայսրության: Անշուշտ, ամերիկյան հասարակությունն ինքնապահպանման բնազդով անմիջապես զգում է նման վտանգները, եւ, ամենայն հավանականությամբ, այս փուլում այն կլինի բավականաչափ վճռական, որպեսզի ստիպի կառավարման կենտրոններին հաշվի առնել իր կամքը:

Սակայն, արդյոք այն կլինի՞ այնքան հզոր, որպեսզի ստիպի այդ կենտրոններին՝ քաղաքականության մեջ առաջնորդվել իդեալներով, որոնց ճիշտ ընկալումը դարձնում է դրանք շահ, այլ ոչ թե շահերով, որոնք սխալաբար զբաղեցնում են իդեալների տեղը՝ հենց որպես այդպիսիք գիտակցվելով:

**ԱՐԵՎՍՏՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ
ԳՈՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**
Արաքս Փաշայան

Միասեռ հասարակություններ ստեղծելու եւ ժողովրդավարական արդի համակարգը ողջ աշխարհում ներդնելու ԱՄՆ քաղաքականությունն ի հայտ է բերել առճակատում իսլամական աշխարհի հետ: Արդյոք իսլամական աշխարհն ընդառաջ կգնա՞ արեւմտյան ժողովրդավարական արժեքներին, թե՞ նրանց միջեւ առկա է քաղաքակրթական անհամատեղություն:

Այս տեսակետից հետաքրքիր է, թե իսլամական աշխարհում արեւմտյան արժեքներ ներդնելուն ինչպես է արձագանքում արդի իսլամական հասարակական-քաղաքական միտքը՝ իր հիմնական ուղղություններով:

Պահպանողականների կարծիքով՝ իսլամական հասարակությունները արեւմտյան կամ այլ տիպի բարեփոխումների անհրաժեշտություն չունեն, քանի որ սոցիալ-քաղաքական բոլոր խնդիրները կարգավորված են շարիաթով, եւ նոր մոտեցումներն անհիմաստ են:

Մոդեռնիստական հոսանքները հանդես են գալիս ազատական գաղափարների համատեքստում, որոնց տեսաբանների կարծիքով՝ իսլամն անհամատեղելի չէ արդիականության, առավել եւս՝ ժողովրդավարական արժեքների հետ, իսկ Արեւմուտքի փորձն ուսանելի է: Այդ իսկ պատճառով նրանք առաջարկում են իսլամական սկզբունքները մեկնաբանել ազատ, ռացիոնալիստական մեթոդով՝ բայց եւ հարազատ մնալ իսլամական սկզբնաղբյուրներին (հիմնականում՝ Ղուրանին եւ սուննային): Նրանց մոտ Արեւմուտքի նկատմամբ առկա մոտեցումները պայմանավորված են ոչ թե գաղափարախոսական, այլ քաղաքական հիմքերով:

Արեւմտյան ժողովրդավարական արժեքները խիստ քննադատության են արժանանում ֆունդամենտալիստների կողմից, որոնք բացարձակացնում են իսլամի քաղաքական եւ սոցիալական հայեցակարգերը: Նրանց համար չկա իսլամին այլընտրանքային որեւէ հայեցակարգ: Ֆունդամենտալիստական հոսանքների ակտիվացմանը

Խթանեց զարգացման արեւմտյան տիպի մոդելների ոչ այնքան հաջողված ներդրման փորձը 1940-1970-ականներին անկախություն ձեռք բերած իսլամական մի շարք պետություններում:

Ֆունդամենտալիստների կարծիքով՝ իսլամական արժեքները նման չեն որեւէ այլ արժեքների եւ զարգանում են սեփական ուղիով: Եթե մոդեռնիստները հնարավոր են համարում արեւմտյան ժողովրդավարության եւ իսլամական արժեքների սինթեզը (ինչը շատ դեպքերում անվանվում է իսլամական ժողովրդավարություն), ապա ֆունդամենտալիստները համոզված են, որ իսլամը հակոտնյա է արեւմտյան ժողովրդավարությանը մի շարք պատճառներով: Նախ՝ իսլամում գերագույն իշխանությունը երկրի վրա պատկանում է Ալլահին, այսինքն՝ մարդկանց վրա իշխանությունը միայն աստծո ձեռքում է: Սակայն մարդիկ իրավունք ունեն մասնակից դառնալ երկրի կառավարմանը: Իսլամական *ուլման* պետք ունենա իր ընտրովի առաջնորդը, որ մարմնավորում է թե՛ հոգեւոր եւ թե՛ աշխարհիկ իշխանությունը: Իշխանությունն օրենսդիր գործունեությամբ չպետք է զբաղվի, այլ պետք է հետամուտ լինի դրա ճիշտ ներդրմանը: Ըստ այդմ՝ արեւմտյան ժողովրդավարությունը չի համապատասխանում իսլամի սկզբունքներին, քանի որ վնասում է երկրի վրա աստծո իշխանությանը եւ ողջ օրենսդիր գործունեությունը հանձնում է մարդկանց ձեռքը: 1989թ. Խարթումում իսլամիստների կազմակերպած «Ավանդականության նշանակությունը իսլամական գործունեության համար» կոնֆերանսում նշվեց, որ *«ժողովրդավարությունն անազնիվ եւ անաստված կառույց է, քանի որ մարդուն օրենսդրությամբ զբաղվելու իրավունք է տալիս, մինչդեռ այդ իրավունքը սուրբ է եւ պատկանում է միայն Ալլահին»*:

Ծայրահեղ ֆունդամենտալիստների տեսանկյունից՝ արեւմտյան ժողովրդավարության հատկանիշներից մեկը՝ բազմակուսակցականությունը, նույնպես անընդունելի է, քանի որ կուսակցությունները կարող են պառակտում առաջացնել հասարակության մեջ, որի հիմքում միասնության գաղափարն է: «Սահմեդական եղբայրներ» կազմակերպության առաջնորդ Յասան ալ-Բաննան (1906-1948թթ.) դեմ էր կուսակցությունների կամ արհեստակցական միությունների գոյությանը, քանի որ դրանք մարդկանց միավորում են ոչ կրոնական եզրերով: Ծագումով պաղեստինցի արմատական գործիչ Սալիհ Սարիյան, որ մահվան դատապարտվեց Եգիպտոսում, մերժելով բազմակուսակցական համակարգը, նշում էր, որ գոյություն ունեն երկու կուսակցություններ՝

«Ալլախի կուսակցություն» եւ «Սատանայի կուսակցություն»։ մասնակցությունը որեւէ քաղաքական կուսակցության՝ նշանակում է հերետիկոսություն։

Արեւմտյան տիպի ընտրությունները ֆունդամենտալիստների կողմից մերժելի են, քանի որ կոչ են անում հետեւել մեծամասնության կարծիքին, ինչը կարող է սխալ լինել, քանի որ մարդկային գործունեության արդյունք է։ Մինչդեռ կա կառավարման ամենակատարյալ ձեւը՝ իսլամական տիպի պետությունը, որն ապրում է սեփական՝ շարիաթի օրենքներով, ինչը հնարավորություն է տալիս խուսափել սխալ որոշումներից, քանի որ օրենքներն իսլամում կանխորոշված են աստծո կողմից։ Այս պարագայում մեծամասնության կարծիքը կարող է հաշվի առնվել այն դեպքում, եթե համընկնում է շարիաթին։ Բացի այդ, արեւմտյան ժողովրդավարությունը հանգեցնում է կապիտալիստների դիկտատուրայի, որոնք օգտագործում են ընտրողների ձայները սեփական նպատակների համար։ Մինչդեռ իսլամական հայեցակարգը նախատեսում է խորհրդակցական բնույթ ունեցող հատուկ մարմնի՝ Շուրայի խորհրդի ստեղծումը, որի միջոցով հաշվի է առնվում ժողովրդի հետաքրքրությունը (Շուրայի խորհուրդն իսլամում գլխավոր ներկայացուցչական մարմինն է, որի մեջ մտնում են հասարակական տարբեր շերտերի եւ ոլորտների ներկայացուցիչներ)։ Լիբիայի առաջնորդ Մուամմար Կադաֆին իր «Կանաչ գրքում» նշում է, որ արեւմտյան չափանիշներով խորհրդարանը, որ հենվում է ժողովրդական ներկայացուցչության վրա, իրականում խաբկանք է, իսկ պառլամենտարիզմը՝ ժողովրդավարության դատապարտելի լուծում։

Մահմեդական արմատական գործիչների համոզմամբ՝ հալածված ժողովուրդներին խաբելու համար Արեւմուտքն օգտագործում է մի շարք հրապուրիչ կարգախոսներ՝ մարդու իրավունքներ, խաղաղություն, ժողովրդավարություն, ազատություն, հավասարություն, եղբայրություն, աշխարհիկություն, որոնց նպատակն է ոչնչացնել իսլամական բարոյական, մշակութային եւ կրոնական արժեքները, դուրս մղել շարիաթը, անգամ՝ գրական արաբերենը՝ այն փոխարինելով բարբառներով։ Եգիպտական ալ-Ջիհադ կազմակերպության առաջնորդ Այման ազ-Ջավահիրին (որը համարվում է Ուսամա բին Լադենի իրավահաջորդը) առանձնացնում է այն թշնամիներին, որոնց միջոցով Արեւմուտքը պայքարում է իսլամի դեմ. դրանք են՝ ՄԱԿ-ը, դրածո վարչակարգերն իսլամական երկրներում, ոչ ազգային, ինչպես նաեւ՝ ամենատարբեր

միջազգային կազմակերպությունները, լրատվական միջազգային գործակալությունները, բարեգործական հիմնադրամները:

Իսլամական արմատական ամենահայտնի տեսաբաններից մեկի՝ Սայիդ Կուտբի (1906-1966թթ.) կարծիքով՝ իսլամական արժեքներից (կամ ճշմարտությունից) հեռացած հասարակություններն, ըստ էության, վերածվել են *ջահիլիական* (կամ Սոի, այսինքն՝ բարբարոսական, հեթանոսական) հասարակությունների: Նա առաջարկում էր ոչնչացնել նման երկրների առաջնորդներին՝ վերականգնելու համար *ուլմայի* ավանդույթները: Պատահական չէ, որ իսլամական ծայրահեղականներն իրենց թիրախ են դարձրել նաեւ ներքին թշնամիներին՝ իսլամական երկրների այն առաջնորդներին կամ հասարակական-քաղաքական գործիչներին, ովքեր համագործակցում են Արեւմուտքի հետ եւ ձգտում են իրենց երկրներում ներդնել զարգացման արեւմտյան մոդելներ: 2002թ. նոյեմբերին «Ամերիկային ուղղված նամակում» բին Լադենը մասնավորապես պահանջում էր ԱՄՆ-ից՝ չաջակցել մահմեդական աշխարհի կոռուկացված առաջնորդներին, ինչպես նաեւ չմիջամտել իսլամի կրթության սկզբունքին:

Այսօր իսլամական աշխարհի բազմաթիվ տեսաբաններ եւ գործիչներ գրեթե միահամուռ են այն հարցում, որ իսլամական երկրների հետամնացության հիմնական պատճառներից է արեւմտյան ազդեցությունը: Նման տեսակետներ հնչում են նաեւ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմնի՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպության ամբիոնից, ինչը նշանակում է, որ այդօրինակ մտայնություններն այսօր հրատապ են ողջ իսլամական աշխարհում:

Մինչդեռ Մեծ Մերձավոր Արեւելքում ժողովրդավարության հաստատումը մոտակա տասնամյակների ընթացքում մնալու է ԱՄՆ արտաքին քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը, իսկ իսլամական արմատական գաղափարախոսների համար իսլամական տիպի պետության ստեղծումը (առավել եւս՝ խալիֆայության վերականգնումը) շարունակում է դիտվել որպես աստվածահաճո գործ:

Միեւնույն ժամանակ, պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կառավարման մեխանիզմների շուրջ իսլամի սուլունի ուղղության մեջ կան տարաբնույթ մոտեցումներ: Նկատի է առնվում այն, որ մարգարեն չի սահմանել իսլամական համայնքի կառավարման հստակ մեխանիզմներ, հետեւաբար՝ տվյալ երկրում ապրող մահմեդականները, հաշվի առնելով սեփական երկրի ավանդույթներն ու

առանձնահատկությունները, կարող են որոշել իրենց պետական համակարգը՝ առաջնորդվելով Ղուրանով եւ սուննայով: Իսկ իսլամական աշխարհի արմատական շրջանակները շարունակում են անվարան մնալ այն հարցում, որ կառավարման արեւմտյան-ժողովրդավարական համակարգը ոչ միայն անընդունելի, այլեւ վնասակար է իսլամական ժողովուրդների համար:

Փաստորեն, իսլամական եւ արեւմտյան քաղաքակրթությունների խաղաղ գոյակցության կամ երկխոսության հարցը շարունակում է խնդրահարույց մնալ. հակամարտող կողմերը տարբեր արժեհամակարգերի կրողներ են, եւ նրանց միջեւ, թերեւս, առկա է «քաղաքակրթական բախում»: Եվ քանի դեռ փորձ է արվում իսլամական աշխարհին պարտադրել նրան խորթ արժեքներ ու գաղափարներ, իսլամի եւ Արեւմուտքի միջեւ առճակատումը կշարունակվի:

21-ՐԴ ԴԱՐ. ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ Սերգեյ Կարազանով

Ասիա. ներխուժում համաշխարհային քաղաքականության կենտրոն

Միջազգային քաղաքականության կենտրոնն անշեղորեն տեղափոխվում է Ասիա: Չինաստանի ժողովրդական Յանրապետությունը (ՉԺՅ), որի համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ), սկսած 1978թ. տնտեսական բարեփոխումների մեկնարկից, աճել է 4 անգամ, շարունակում է ավելացնել իր ներուժը: Չինական տնտեսության աճի ամենամյա տեմպերը տատանվում են 8,5-10%-ի սահմաններում, ընդ որում, ըստ որոշ ենթադրությունների, Պեկինն աճի իսկական ծավալները գիտակցաբար գաղտնի է պահում: Յնարավոր է՝ նա այդպիսով ջանում է թաքցնել պաշտպանական ծախսերի իրական աճը:

Վերլուծաբանների մեծ մասն այն եզրակացությանն է հանգում, որ Չինաստանի զարգացման տեմպերը կմնան բարձր, ու երկիրն առաջիկա 20 տարիներին հիմնական ցուցանիշներով «դատապարտված» է վերածվելու աշխարհի երկրորդ տերության: Նա այժմ էլ ՀՆԱ գնողունակությամբ այդպիսին է: Միայն ՉԺՅ տնօրինության տակ գտնվող ԱՄՆ արժեթղթերի ծավալը այդ երկրին Միացյալ Նահանգների եւ համաշխարհային ֆինանսական համակարգի վրա ազդելու լուրջ հնարավորություններ է տալիս: Գիշտ է, շատերը կանխագուշակում են, որ չափից արագ բարեփոխումները կհանգեցնեն անխուսափելի ճգնաժամի, սակայն նման մարգարեություններ արդեն երկու տասնամյակ հնչում են:

Յամաձայն մի շարք կանխատեսումների, 2040-2050թթ. Չինաստանին բաժին կընկնի համաշխարհային ՀՆԱ 14-16%-ը: Այս հեռանկարների առկայությունը հանդես է գալիս որպես ՉԺՅ ներկայիս տնտեսական, քաղաքական եւ ռազմական հզորության յուրատեսակ բազմապատկիչ՝ լրացուցիչ մեծացնելով Պեկինի միջազգային կշիռը:

Յամաշխարհային տերությունների բարձրագույն լիգա է սրընթաց ներխուժում Յնդկաստանը: Վերջին 10 տարիներին նրա տնտեսությունը միջին հաշվով տարեկան աճել է 8%-ով, ընդ որում՝ այդ աճը, որ ապահովվում է առավելապես ներքին, այլ ոչ թե օտարերկրյա ներդրումների հաշվին, համարվում է առավել կայուն եւ առողջ, քան Չինաստանում:

Յնդկաստանը վերածվում է համաշխարհային տեխնոլոգիական առաջ-ընթացի շարժիչներից մեկի, իսկ 20-30 տարի անց այն, համաձայն կանխատեսումների, կդառնա ԱՄՆ-ից ու Չինաստանից հետո երրորդ համաշխարհային տերությունը: Յնդկաստանը ծրագրային ապահովման եւ մի շարք այլ բարձր տեխնոլոգիաների համաշխարհային գլխավոր մատակարարներից է: Այստեղ ձեւավորվել է հզոր միջին խավ, որն ավելի մեծաթիվ է, քան Եվրամիությունում:

Անշուշտ, Յնդկաստանն ու Չինաստանը, իրենց աղքատ բնակչության հսկայական զանգվածներով, մնում են համեմատաբար թույլ զարգացած երկրներ: Սակայն մարդիկ այնտեղ չեն սովում, ինչպես 5-10 տարի առաջ էր, ինչը բավական մեծ կայունություն է հաղորդում այդ երկրներին՝ հատկապես Յնդկաստանին, որտեղ առկա է հաստատուն ժողովրդավարություն:

Յնդկաստանի համեմատաբար համեստ զինված ուժերը (1 մլն զինծառայող. ավելի քիչ, քան Ռուսաստանինն է) ընդունակ են արագ ավելացնել մարտական պատրաստությունը: Ստեղծվում է հզոր նավատորմ՝ հեռանկարում 4 ավիակիր խմբերով: Առկա է Հարավարեւելյան եւ Պարսից ծոցի տարածաշրջաններում կայունության ինքնուրույն ռազմաքաղաքական երաշխավորի դերի հայտը: Դելին աշխուժացնում է նաեւ խաղաղարարական գործունեությունը՝ իր ամենախոշոր զորակազմերը տրամադրելով ՄԱԿ համապատասխան գործողությունների անցկացման համար:

Որքանով կարելի է դատել, Յնդկաստանի գլխավոր նպատակը ողջ Ասիայում, այդ թվում՝ նաեւ նրա անկայուն հատվածներում («ընդլայնված» Մերձավոր Արեւելք՝ հատկապես Իրան եւ Պարսից ծոցի երկրներ) ազդեցության կարեւոր գործոն դառնալն է: Վարելով Չինաստանին աստիճանաբար մերձենալու գիծ՝ Դելին միաժամանակ ձգտում է Պեկինին հակակշռի դեր խաղալ, թեւեւ մտադիր չէ վերածվել նրան զսպելու գործիքի:

Ասիայում առկա է տարածաշրջանային տնտեսական դաշինքի ձեւավորման միտումը՝ ընդունակ տասնամյակներ հետո դառնալ տնտեսական ուժի հզորագույն կենտրոն: Այսպիսի դաշինքը կարող է հիմնվել Հարավարեւելյան Ասիայի պետությունների ասոցիացիայի (ԱՍԷԱՆ) վրա: Այսպես թե այնպես, նոր միավորման կազմավորմանը լուրջ հակազդեցություն ցույց կտրվի (առաջին հերթին՝ ԱՄՆ կողմից), սակայն այս գործընթացը հազիվ թե հնարավոր լինի կանգնեցնել:

Ձուգահեռաբար ուժ է հավաքում նոր երեւոյթ՝ ազգայնականության աճը, որը դիտվում է տարածաշրջանի զարգացող երկրներում: Այն

դրսեւորվում է թե՛ Ասիայի պետությունների մակարդակով (հակամարտությունները ճապոնիայի եւ Չինաստանի, ճապոնիայի ու Յարավային Կորեայի միջեւ՝ պայմանավորված պատմության տարբեր մեկնաբանությամբ), թե՛, ամենից առաջ՝ Արեւմուտքի նկատմամբ: Ասիայի տերությունները, ձեռք բերելով վստահություն սեփական ուժերի նկատմամբ, ձգտում են թոթափել դարեր շարունակ Արեւմուտքի կողմից իրենց պարտադրված գաղափարախոսական ու մշակութային տիրապետությունը: Նրանք հայտարարում են տնտեսությունում եւ քաղաքականությունում կան հարեւանների աջակցությամբ, կան (առայժմ) միայնակ ինքնուրույն գիծ վարելու պատրաստակամության մասին:

Վերն ասվածի համատեքստում՝ կասկածի ենթակա չէ, որ ասիական տարածաշրջանի վրա ազդեցության համար մրցակցությունը (ինչպես նախորդ դարերում Եվրոպայի համար պայքարը) դառնում է միջազգային քաղաքականության գլխավոր բաղադրիչը:

Միացյալ Նահանգներ. թուլացում՝ հզորության պահպանումով

ԱՄՆ-ը ապրում է ժողովրդականության (որի վրա էր դեռ վերջերս հիմնվում նրա միջազգային ազդեցությունը) աննախադեպ անկման ժամանակաշրջան: Վերջին տարիների իրադարձությունների արդյունքում՝ Վաշինգտոնի հեղինակությանը եւ ազդեցությանը զգալի վնաս հասցվեց:

21-րդ դարասկզբում Միացյալ Նահանգները կրկնակի «դրույք» կատարեց: Առաջինը՝ միջազգային հարաբերությունների «չվերահսկվող անկայունության» եւ այդ իրադրությունում իր ռազմական գերակշռության օգտագործման, երկրորդը՝ ահաբեկչության սպառնալիքի նվազեցման ու տարածաշրջանում սեփական դիրքերի ուժեղացման նպատակով՝ Մեծ Մերձավոր Արեւելքի ժողովրդավարացման վրա:

Սակայն այս նպատակներին հասնելու փորձը՝ մասնավորապես Իրաք ներխուժելու ճանապարհով, անհաջող ստացվեց: Իրաքյան գործողությունը կապեց Վաշինգտոնի ձեռքերը՝ սահմանափակելով մյուս ճգնաժամերի (Իրան, Յյուս. Կորեա, պաղեստինա-իսրայելական հակամարտություն) վրա ազդելու նրա հնարավորությունները: Վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ ամերիկյան վերնախավն արտաքին քաղաքականության հարցում պառակտվեց: Պարզվում է, որ Միացյալ Նահանգներն ունի բավարար ռազմական ուժ, որպեսզի շահի ցանկացած պատերազմ, բայց քաղաքական նպատակներին հասնելու, «խաղաղություն շահելու» համար չեն բավականացնում պաշարները: Նոր Օռլեանի

ողբերգական դեպքերը դրսեւորեցին սեփական տարածքում բնական աղետների դեմ ամերիկյան պետական մեքենայի անարդյունավետությունը եւ ցուցադրեցին միակ գերտերության հնարավորությունների սահմանները:

Թեեւ ԱՄՆ-ն ու Եվրոպան մնում են որպես մեկ քաղաքական-տնտեսական եւ մշակութային քաղաքակրթության մասեր, սակայն նրանց միջեւ տարանջատումը հաղթահարել չհաջողվեց եւ արդեն դժվար թե հաջողվի: Վաշինգտոնը գործնականում չի թաքցնում Եվրոպական այնպիսի ինտեգրմանը խոչընդոտելու իր մտադրությունը, որը Հին աշխարհը կդարձնի համաշխարհային կարգի ռազմաքաղաքական «խաղացող»: Միացյալ Նահանգներն ավելի պարզորոշ կերպով է հրաժարվում դեպի Եվրոպա՝ որպես հիմնական գործընկերոջ, կողմնորոշումից՝ հեռանկարային «դրույք» կատարելով Ասիայի վրա: Ամենայն հավանականությամբ, մոտակա տարիներին հենց ասիական ուղղությունն է լինելու ամերիկյան քաղաքականության գլխավոր գիծը:

ԱՄՆ-ը Հնդկաստանի վրա ազդեցության համար ծավալվող մրցակցությունում հանդես է բերում աննախադեպ ակտիվություն: Վաշինգտոնը Դելիին առաջարկում է ոչ միայն «հատուկ հարաբերություններ», տեղ «Մեծ ութնյակում» եւ ՄԱԿ Անվտանգության խորհրդում, այլեւ նորագույն սպառազինություն: Ամերիկյան պատրաստ է մասնակցել հնդկական ԱԷԿ-ների շինարարությանը. առաջարկը ստացվել է General Electric եւ Westinghouse ընկերություններից, որոնք վայելում են Սպիտակ տան աջակցությունը: Եվ դա՝ չնայած նրան, որ Հնդկաստանի կողմից միջուկային տերության կարգավիճակի ձեռքբերումը դաժան հարված հասցրեց «չտարածման» պայմանակարգին:

Միացյալ Նահանգների արտաքին քաղաքական դժվարությունները խորացվում են ամերիկյան տնտեսության կառուցվածքային խնդիրներով: Առաջվա պես աճում են եւ արտաքին, եւ ներքին պարտքերը, ձեւավորվել է նոր «փուլիկ»՝ անշարժ գույքի վերագնահատումը: Միաժամանակ, լոկ խոսքերով գերազատական ԱՄՆ վարչակազմը պետական պարտքի մեխանիզմի օգնությամբ «հետին դռնով» տնտեսությունը լցնում է փողով ու ներդրումներով՝ այդպիսով ապահովելով բավական բարձր եւ կայուն աճ: Նոր «փուլիկը» կարող է հանգիստ ուռչել, բայց կարող է նաեւ պայթել՝ առաջացնելով սոցիալական ցնցումներ:

ԱՄՆ-ը որակյալ կրթության եւ կարեւորագույն տեխնոլոգիաների ամենախոշոր արտահանողն է աշխարհում: Միաժամանակ, ամերիկյան փորձագետներին անհանգստացնում է երկրում տեխնիկական կրթության մակարդակը: Պակասը լրացվում է (ճիշտ է՝ մասնակիորեն) ի հաշիվ

կրթված ներգաղթյալների ներգրավման, ինչպես նաև՝ տեխնոլոգիապես զարգացող երկրներում պատվերների բաշխման ճանապարհով:

Ամենայն հավանականությամբ, Ամերիկյան բախվելու է տնտեսական լուրջ խնդիրների, սակայն տեսանելի ապագայում մնալու է առավել հարածուն (դինամիկ) հասարակությունը եւ գլխավոր համաշխարհային գերտերությունը՝ տնտեսական, ռազմական, դիվանագիտական, նաև գաղափարախոսական իմաստով: Միացյալ Նահանգների հրաժարումը ակտիվ գլոբալ դերից քիչ հավանական է. ներկայիս եռանդուն զավթողական քաղաքականությանը սատարում են նաև այն շրջանակները, որոնք ավանդաբար պաշտպանում են մեկուսացման գաղափարախոսությունը: ԱՄՆ մասնակի թուլացումն օգտագործելու փորձերը չափազանց վտանգավոր են. այն թանկ կնստի ցանկացած պետության վրա:

Եվրոպական Միություն. հնարավոր հրաժեշտ ամբիցիաներին

Համաեվրոպական Սահմանադրության հանրաքվեների ձախողումը Ֆրանսիայում եւ Նիդեռլանդներում ի հայտ բերեց ԵՄ կառուցվածքային շատ թերություններ՝ կուտակված տարիների ընթացքում: Մասնավորապես, դրանք են՝ տնտեսական դանդաղ աճը, գործազրկության կայուն բարձր մակարդակը («հին Եվրոպայի» երկրների մեծ մասում՝ շուրջ կամ նույնիսկ 10%-ից ավելի), ազատական բարեփոխումներ իրականացնելու անկարողությունն ու բնակչության մեծամասնության կողմից դրանց չընդունումը: Ընդ որում, չնայած ճգնաժամային իրավիճակի եւ աճի ցածր տեմպերի կործանարարության գիտակցմանը, տնտեսական ու սոցիալական քաղաքականության կտրուկ նորացման հնարավորությունները շատ փոքր են: Եվրոպան չափից ավելի բարձր է գնահատում սեփական բարեկեցությունը, որպեսզի գնա ցավոտ բարեփոխումների: Համաշխարհային պատերազմներ ծնող պատճառները հաղթահարված են, կոմունիստական ազդեցության հետ պայքարելու հարկ չկա: Եվրոպացիները հասել են գրեթե ամեն ինչի, որին ի սկզբանե ձգտում էր ինտեգրման նախագիծը: Իշխանության է եկել մի սերունդ, որը ստեղծված բարենպաստ կացությունն ինքնին հասկանալի է համարում: Ճիշտ է, «նոր եվրոպացիները» «հին Եվրոպային» կորդեն բարեփոխումների, սակայն նրանց ազդեցության ներուժը սահմանափակ է:

Հանրաքվեների տապալումից հետո քաղաքական միության կամ կեղծ պետության (եվրոպացիների հին սերնդի վերջին խոյանքը) ստեղծման գործընթացը, թերևս, առնվազն մի քանի տարով դադարի: ԵՄ հետագա ընդարձակումը չի առաջացնում կառավարող վերնախավի

խանդավառությունը եւ չի աջակցվում բնակչության զգալի մասի կողմից: 2007թ. այս կազմակերպության մեջ Բուլղարիայի ու Ռումինիայի մտնելու որոշումը, որոնց հետ պայմանագրերն արդեն ստորագրված են, ընդունվել է կուլուարներում, եվրոպական հանրությունից գրեթե գաղտնի՝ պետությունների արտաքին գործերի նախարարների, այլ ոչ թե նախագահների մակարդակով՝ ինչպես սովորաբար է: Թուրքիայի անդամակցության հարցը առաջիկա տարիների օրակարգից գործնականում հանված է, Ուկրաինայի թեկնածությունը լրջորեն չի քննարկվում, Ռուսաստանին՝ առավել եւս:

ԵՄ-ն իր ապագայի մասին բանավեճերի վրա կարող է եւս 4-5 տարի վատնել՝ այդպիսով կորցնելով բարեփոխումների անցկացման համար այդքան անհրաժեշտ ժամանակը: Առաջիկա տարիներին քիչ հավանական է միասնական արտաքին կամ, առավել եւս, պաշտպանական քաղաքականության ձեւավորումը: Արդյունքում՝ մյուս կենտրոններից եվրոպայի հետ մնալու միտումը, հավանաբար, կխորանա եւ կդառնա անշրջելի: Ենթադրվում է, որ 2030-2050թթ. միացյալ Եվրոպան ՅՆԱ ծավալով ոչ միայն կգիջի ԱՄՆ-ին, այլեւ Չինաստանին:

Աշխարհում, որտեղ ռազմական ուժի գործունե կրկին ստանում է կարեւոր նշանակություն, ԵՄ-ը ստեղծում է «հետպատերազմյան զինված ուժեր»՝ թվով միլիոն մարդ, որոնք, փաստորեն, ոչ միայն կռվելու, նույնիսկ խաղաղարար գործողությունների մեծ մասին արդյունավետ մասնակցելու անընդունակ են:

Չնայած բարեկամական ճարտասանությանը, այս պայմաններում ԵՄ-ն «ապավինեց» Ռուսաստանի հետ մերձեցման գործընթացի փաստացի սառեցմանը եւ սկսեց վարել «խաղաղ գոյակցության», իսկ տնտեսական ոլորտում՝ նաեւ կոշտ մրցակցության քաղաքականություն: Մի շարք վերջնական լուծում չստացած խնդիրների ֆոնի վրա՝ կապված գյուղատնտեսական նպաստների, էներգակիրների գների, կալիինի գրադյան տրանզիտի հետ, նաեւ փորձեր են արվում թուլացնել ռուսական քաղաքացիական ավիացիայի եւ ավիացիոն արդյունաբերության մրցունակությունը: Եվ դա՝ այն բանից հետո, երբ Ռուսաստանն արձագանքեց Բրյուսելի դիմումին ու համաձայնեց ստորագրել Կիոտոյի արձանագրությունը: ԵՄ-ը ձգտում է Ռուսաստանի հաշվին տպավորություն ստեղծել, թե իբր ինքն, այնուամենայնիվ, միասնական արտաքին քաղաքականություն ունի, եւ այն նույնիսկ արդյունավետ է:

Այստեղից էլ՝ «սառեցված ճգնաժամերի» կամ, ավելի ճիշտ, «չճանաչված պետությունների» խնդիրների կարգավորման գործում որպես դատավոր հանդես գալու փորձերը եւ այնտեղից ռուսական

գորքերի դուրսբերման մշտական պահանջները: Սրան է վերաբերում նաև «Կենտրոնական Ասիայի գծով հատուկ ներկայացուցչի» նշանակումը: Եվրախորհրդարանը գրեթե միշտ բալթյան երկրների կողմն է, որոնք հակառուսական դիրքորոշում ունեն, ինչպես նաև պաշտպանում է «հյուսիսային տարածքների վերադարձման» ճապոնիայի պահանջները:

Սակայն Եվրոպայի հետ Ռուսաստանի հարաբերություններում «պատմության վերջը» չի հասել: Ապագայում ԵՄ արժեքային պաշարները կարող են փոփոխվել. հնարավոր է, որ քաղաքական միավորման հետագա կառուցման փոխարեն տեղի ունենա վերադարձ «ընդլայնված ընդհանուր շուկա եւ սոցիալական միություն՝ գումարած միասնական արժույթ» մոդելին: Բացի այդ, Բրյուսելն ինքը, տեսնելով իր համաշխարհային դիրքերի թուլացումը, վերջապես կարող է Ռուսաստանի հետ ռազմավարական մերձեցման ուղի վերցնել: Ուստի ԵՄ-ի հետ սերտ համագործակցումը մնում է ռուսական քաղաքականության հրամայականը:

(տպագրվում է կրճատումներով)

«Россия в глобальной политике», N5, 2005

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ
Ա. ԳՈՒՐԵՆԻ**

2005թ. հոկտեմբերի 24-ին Թուրքիայի Ազգային անվտանգության խորհրդի (ԱԱԽ) նիստում, նախագահ Ահմեդ Սեզերի նախագահությամբ, ընդունվեց երկրի ազգային անվտանգության նոր հայեցակարգը: Այն ստացավ «Ազգային անվտանգության մասին քաղաքական փաստաթուղթ» պաշտոնական անվանումը: Առօրյայում հայեցակարգը հայտնի է նաեւ «կարմիր գիրք», «գաղտնի սահմանադրություն», «կարմիր սահմանադրություն» անվանումներով: Այս փաստաթղթի նախագծի վրա տարուց ավելի տեւած բարդ աշխատանքին մասնակցել են Թուրքիայի քաղաքականություն կերտող բոլոր գերատեսչությունները:

Համաձայն օրենքի, տվյալ փաստաթղթի բովանդակությունը ենթակա չէ հրապարակման, քանզի համարվում է պետական գաղտնիք: Այնուամենայնիվ, Թուրքիայի որոշ զանգվածային լրատվամիջոցներում հայտնվեցին առանձին հաղորդագրություններ ու նյութեր, որտեղ մեջբերվում են, ինչպես հավաստում են հեղինակները, «կարմիր գրքի» բնագրին համապատասխանող քաղվածքներ: Այս կապակցությամբ, փաստաթղթի հաստատումից երեք օր հետո ԱԱԽ նիստում Թուրքիայի կառավարությունը երկրի հատուկ ծառայություններին հանձնարարեց գտնել ազգային անվտանգության նոր հայեցակարգի գաղտնի դրույթների՝ նամուլ արտահոսքի մեղավորին: Ինչպես պարզվեց, «գաղտնի սահմանադրության» վերջնական տեքստին տեղյակ են եղել պետության 15 բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց թվում են՝ նախագահը, վարչապետը, ԱԳՆ, հետախուզության, ուժային գերատեսչությունների ղեկավարները, ԱԱԽ անդամները, պետության ղեկավարի եւ ԱԱԽ քարտուղարի մի քանի օգնականներ: Սա թուրքական մամուլում գաղտնի նյութերի հրապարակման առաջին դեպքը չէ, սակայն ուշադրություն է հրավիրում այն, որ առաջին անգամ թուրքական իշխանությունները հրապարակավ հայտարարեցին քրեական հետաքննություն անցկացնելու մասին:

Անշուշտ, Թուրքիայի ազգային անվտանգության նոր հայեցակարգը կարելիորագույն փաստաթուղթ է, որը ներկայացնում է ազգային արտաքին ու ներքին քաղաքականության բովանդակության եւ հիմնական ուղղությունների, ինչպես նաեւ նրանց արդյունավետ կենսագործման ապահով-

ման վերաբերյալ երկրի ղեկավարության հայացքների համակարգը: Նրա բացառիկ նշանակությունը բացատրվում է այն անընդհատ աճող դերով, որ Թուրքիան տարածաշրջանային ու գլոբալ մասշտաբով խաղում է արդի միջազգային հարաբերությունների համակարգում: Թուրքիայի ազգային անվտանգության ներկայիս հայեցակարգն առանձնահատուկ է նրանով, որ առաջին անգամ դրա պատրաստմանը մասնակցել են ե՛ւ զինվորական, ե՛ւ քաղաքացիական գերատեսչությունները, այն դեպքում, երբ նախորդ բոլոր նմանատիպ փաստաթղթերը պատրաստում էին զինվորականները. քաղաքացիական ղեկավարները դրանք ստորագրում էին: Նախկինում ձեւական էր նաեւ կառավարության նիստում դրանց հաստատումը: Թեեւ ԱԱԽ որոշումներն արտաքուստ կրում էին խորհրդատվական բնույթ, սակայն ենթակա էին անվերապահ կատարման:

Նոր հայեցակարգի բնորոշիչ գիծը կարելի է համարել եւ այն, որ այժմ Թուրքիայի անվտանգության հարցերը դիտարկվում են ոչ միայն մյուս երկրների հետ միջպետական հարաբերությունների պրիզմայի միջով, այլեւ Թուրքիային ու նրա շահերին սպառնալիք ներկայացնող հավանական վտանգավոր տարածաշրջանների, տարածաշրջանային հակամարտությունների ու տարբեր արմատական կազմակերպությունների գործունեության առկայության տեսանկյունից: Մի կողմից՝ դրանք վկայում են երկրում աճող քաղաքական կուլտուրայի մասին, մյուս կողմից՝ ցուցադրում են Թուրքիայի՝ որպես տարածաշրջանային տերության, կարելիության մեծացումը, որը սպառնալիք հանդիսացող տարբեր կազմակերպությունների դեմ այլ երկրների հետ համատեղ գործողությունների, ինչպես նաեւ տարածաշրջանային առճակատումների լուծման համար (հաշվի առնելով իր ազգային շահերը) տնտեսական, ռազմական եւ քաղաքական հնարավորություններ ունի:

Թուրք քաղաքագետները փաստաթղթի վերլուծության ընթացքում առաջին հերթին հատուկ ուշադրություն դարձրին նրանում առկա այն խնդիրների մեկնաբանությանը, որոնք անմիջական կամ անուղղակի կապ ունեն ԵՄ-ին Թուրքիայի լիիրավ անդամակցության հարցով սկսվող բանակցությունների գործընթացի հետ: Դրանք թուրք-հունական հարաբերությունների, կիպրական կարգավորման, հայերի ցեղասպանության խնդիրներն են, քրդական հարցը: Այսպես՝ փաստաթղթի վերջնական տարբերակում հաստատագրված է այն դրույթը, որ Թուրքիան կարող է որպես պատերազմի սկսման պատճառ որակել Յունաստանի կողմից Էգեյան ծովում տարածքային ջրերի մինչեւ 12 մղոն ընդարձակումը: Հայեցակարգում նաեւ նշվում է, որ այդ ծովի ավելի քան 100 վիճելի կղզիների հարցում չպետք է որեւէ զիջում անել, այլ անհրաժեշտ է վարել

ազգային շահերի պաշտպանության վճռական քաղաքականություն: Հիշեցնենք, որ այդ կղզիներից մեկի՝ Քարդակի պատկանելության հարցում Թուրքիայի ու Հունաստանի վեճերը մի քանի անգամ նրանց ռազմական դիմակայությունը հասցրել են վտանգավոր սահմանի:

Ուշագրավ է, որ «կարմիր գրքում» բացահայտված է նաև թուրքական կողմի նման կոշտ դիրքորոշման կոնկրետ պատճառը: Այն պայմանավորված է 1994, 1996 եւ 1998 թվականներին հունական խորհրդարանի ընդունած եւ, մասնավորապես, Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի ցեղասպանությունը ճանաչած 3 որոշումներով: Փաստաթղթում նշվում է, որ վերոհիշյալ հարցերի շուրջ Թուրքիայի դիրքորոշումը կարող է վերանայվել (մեղմացվել) սոսկ Հունաստանի խորհրդարանի կողմից այդ որոշումների չեղյալ հայտարարման դեպքում: Ինչ վերաբերում է կիպրական հարցին, ապա նոր հայեցակարգում ձեւակերպված է միանշանակ դրույթ այն մասին, որ Կիպրոսը կարող է ճանաչվել Անկարայի կողմից, իսկ նրա համար Թուրքիայի նավահանգիստներն ու օդակայանները կարող են բաց լինել՝ միայն կղզու խնդրի համապարփակ եւ արդարացի լուծման դեպքում:

«Գաղտնի սահմանադրության» մեջ հնարավոր ռազմական վտանգների եւս մեկ շրջան է նշվում Հյուսիսային Իրաքը: Այստեղ հետաքրքրություն է ներկայացնում այն իրողությունը, որ փաստաթղթում քրդական պետության կազմավորման հնարավորությունը չի նույնացվում ռազմական գործողությունների սկսման փաստարկի հետ: Միաժամանակ, նոր հայեցակարգում շեշտվում է, որ Քիրքուկում եւ թուրքմենների նկատմամբ Հյուսիսային Իրաքում քրդական խմբավորումների գործողությունները կարող են լուրջ խնդիր առաջացնել, ինչը սպառնալիք է հանդիսանում ողջ մերձավորարեւելյան տարածաշրջանի կայունության եւ անվտանգության համար:

Ուշագրավ է այն, որ փաստաթղթում առաջին անգամ՝ այսօրվա իրողություններին համապատասխան, հատուկ նշված է Թուրքիայի համար վտանգ ներկայացնող նոր սպառնալիքների ու մարտահրավերների հերթականությունը: Ըստ վտանգավորության աստիճանի՝ դրանք բաշխված են հետեւյալ կերպ. անջատողական եւ կղերական գործունեություն, միջազգային ահաբեկչական ու կրոնական-ժայրահեղական արմատական կազմակերպություններ, նարկոտրաֆիկ, անօրինական միգրացիա եւ մարդկանց առեւանգում: Թուրք փորձագետները ուշադրություն են դարձնում այն փաստին, որ 1997թ. նմանօրինակ փաստաթղթի համեմատ՝ սպառնալիքների ցանկում բացակայում են ժայրահեղ աջ ազգայնական կազմակերպությունները: Ընդ որում՝ փաստաթղթում

արձանագրվում է, որ «Թուրքիան գտնվում է միջազգային ահաբեկչության սպառնալիքի տակ, ինչն աջակցություն է գտնում նաեւ թուրքական տարածքի մի հատվածում»: Այստեղ նշվում է Քուրդիստանի բանվորական կուսակցությունը, որը «Ալ-Կաիդա»-ի եւ «Չիզբուլլահ»-ի («Չիզբալլահ»-ի թուրքական տարատեսակը) հետ մեկտեղ ընդգրկված է «կարմիր գրքում» թվարկված սպառնալիքներն ու մարտահրավերները մարմնավորող կազմակերպությունների ցանկում:

Թուրքիայի անվտանգության նոր հայեցակարգում մեծ ուշադրություն է հատկացվում նաեւ ներքին կայունության ամրապնդման խնդիրներին: Առաջին հերթին, դրանք երկրում եկամուտների անհամաչափ բաշխման, հանցագործության աճի, գործազրկության (ներկայումս նրա մակարդակը 10,9% է, գյուղական շրջաններում՝ 70,5%), պետություն – ժողովուրդ փոխհարաբերություններում առկա խնդիրներն են: Փաստաթղթում առանձին գլխով անդրադարձված է երիտասարդության նկատմամբ սոցիալական քաղաքականությանը: Թուրքիայի համար այն չափազանց կարեւոր է, քանզի, երկրում երիտասարդության զգալի տոկոսի պայմաններում, նրանց շրջանում դիտվում է գործազրկության բարձր մակարդակ, ինչպես նաեւ, միայն պաշտոնական տվյալներով, գրանցված են 6-14 տարեկան 1 մլն-ից ավելի աշխատող երեխաներ, ինչն ամենեւին չի համապատասխանում ԵՄ չափորոշիչներին, որտեղ 14 տարեկանից փոքր երեխաներին արգելվում է աշխատել:

Փաստաթղթում առաջին անգամ ներառված է «ազգային տնտեսական անվտանգության ապահովում» հասկացությունը, որը համարվում է պետության կարեւորագույն գործառույթներից մեկը: Ընդ որում՝ նշվում է, որ այդ խնդրի լուծման ուղղություններից է (հաշվի առնելով Թուրքիայի աշխարհաքաղաքական եւ աշխարհագրական դիրքը) երկրի վերածումը էներգապաշարների փոխադրման ու պահեստավորման համաշխարհային տարանցիկ կետի:

Մենք մեր տրամադրության տակ չունենք կոնկրետ տեղեկություններ «կարմիր գրքում» նշված այն երկրների մասին, որոնց հանդեպ քաղաքականությունը Թուրքիայի համար առաջնային է: Միաժամանակ, սույն փաստաթղթի որոշ դրույթների (տնտեսական եւ էներգետիկ անվտանգության ապահովում, պայքար միջազգային ահաբեկչության, կրոնական ծայրահեղականության, անջատողականության, նարկոտրաֆիկի, զանգվածային ոչնչացման զենքի տարածման, անօրինական գաղթի եւ մարդկանց առեւանգման դեմ) վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ Ռուսաստանն այդ ցուցակում ներկայացված է: Չէ՞ որ ներկա փուլում հենց այդ ուղղություններում է նկատվում ամենաբարձր

մակարդակով արդյունավետ քաղաքական երկխոսություն, ռուս-թուրքական երկկողմ հարաբերությունների հարաճուն խորացում, որոնք այսօր վստահորեն դուրս են գալիս բազմապլան գործընկերության մակարդակ:

Վերջում հարկ է նորից նշել, որ առաջին անգամ Թուրքիայի պետական ու քաղաքական վերին օղակներում հատուկ ընդգծվում է ազգային անվտանգության նոր հայեցակարգի հաստատման ընթացակարգի կառավարական մասը: Իշխող կուսակցությունը եւ նրա կառավարությունն ակնհայտ կերպով ցուցադրում են իրենց առանձնաշնորհը «գաղտնի սահմանադրության» մշակման գործում՝ շեշտելով իշխանության քաղաքացիական, այլ ոչ թե զինվորական ինստիտուտների առաջնությունը, ինչը նույնպես համապատասխանում է Թուրքիայի քաղաքական կյանքում բանակի դերի կրճատման ԵՄ պահանջներին:

Այսօր բանակը քաղաքականության առջեւի գծից աստիճանաբար «հեռանում է գորրանոցները»: Այս առումով հատկանշական է ս.թ. նոյեմբերի 2-ին վարչապետ Էրդողանի ելույթն իր գլխավորած՝ կառավարող Արդարություն եւ զարգացում կուսակցության ղեկավար խորհրդի նիստում: Կուսակցության իր զինակիցների առջեւ ելույթի ընթացքում նա ազգային անվտանգության մասին փաստաթղթից գաղտնի տեղեկությունների արտահոսքի մեջ մեղադրեց ԱԱԽ քարտուղարությանը՝ նշելով, որ «դա տեղի է ունեցել փաստաթղթի պատրաստման փուլում, որտեղ ներգրավված են եղել ցածր մակարդակի վարչարարներ»: Նախկինում ԱԱԽ աշխատակազմի հասցեին նման հրապարակավ քննադատությունն անգամ վարչապետի կողմից անհնարին էր:

(տպագրվում է կրճատումներով)

www. iimes.ru

(Մերձավոր Արեւելքի ինստիտուտ)

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Սարգիս Հարությունյան ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ	1
Սեւակ Սարուխանյան ՆՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐ ԻՐԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ	9
Գագիկ Տեր-Հարությունյան ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ՖՐԱՆՍԻԱՅՈՒՄ ՄԱՅՄԵԴԱԿԱՆ ԸՆԴՎՁՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ	14
Դավիթ Հովհաննիսյան «ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏ», ԹԵ՞ «ԺԱՆՐԻ ՃԳՆԱԺԱՄ»	19
Արաքս Փաշայան ԱՐԵՎՄՏՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ԳՈՅԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ	24
Սերգեյ Կարազանով 21-ՐԴ ԴԱՐ. ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԻ ՈՒՐՎԱԳԾԵՐ	29
Ա. Գուրել ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ	36

*Շապիկի վրա պատկերված է
Նորավանքը (Վայոց ձոր)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Աղամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hkh.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,25 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակը՝ «Arial Armenian» եւ «Vs Helvetica»:
Վկայական՝ ՕՄՄ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: